

ՀՈԽՀ ՀՈՂԱԾԿՈՄԱՏ—ՊՏՂԱԲԱՆՁԱՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԶՈՒԱԼ ԿԱՅԱՆ

Պ Ա Յ Ք Ա Ր

ՊՏՂԱԲԱՆՁԱՐԱԲՈՒԺԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

635

Դ-95

ԳՅՈՒՂՂԱԲԱ

1934

ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

ՀՈՒՆ ՀՈԼ ԽՈՂԿՈՄԱՏ — ՊՏՂ Ա.ԲԱՆՉԱՐԱ.ԲՈՒԺԱԿԱՆ ԶՈՆԱ ԿԱՅԱՆ


635  
7-95 up.

ՊԱՅՔԱՐ  
ՊՏՂԱԲԱՆԶԱՐԱԲՈՒԺԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

30/4

622 38

ԽՄԲԱԳՐԵց  
ԱՐ. ՅԱ.ՓՈՒԶԵԱՆ



1934

ՅԵՐԵՎԱՆ

**ՊՏԾԱԲԱՆՉԱՐԱԲՈՒՇՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**17-րդ կուսակցական համագումարը գյուղատնտեսության դարգացման առաջ իր ամբողջ լայնությամբ գրեց բերքատվության բարձրացման խնդիրը:**

Պտղաբուծության և բանջարաբուծության ասպարիզում ևս, վորը հանդիսանում ե գյուղատնտեսության ամենակարևոր և բարդ ճյուղերից մեկը, ներկայումս հիմնականը—բերքատվության, արտադրանքի վորակի բարձրացման խնդիրն ե:

Մենք պետք ե բարձրորակ թարմու վերամշակված պտուղներով և բանջարեղեններով բավարարենք մեր բանջորության ու կոլխոզային մասսաների աճող պահանջը, ինչպես այդ 17-րդ համագումարում գնում են մեր առաջ ընկ. ընկ. Ստալինը և Կադանովիչը:

Պտղաբուծական և բանջարաբուծական նոր տնտեսություններում մենք զգալի չափով լայնացրել ենք այդ կուլտուրաների մշակությունը, մանավանդ քաղաքամերձ գոտում և վերամշակող գործարանների շուրջը: Սակայն անհրաժեշտ ե ամենայն խստությամբ նշել, վոր հարյուրավոր հեկտարների յուրացման հետ միասին գեռ մեր տնտեսություններում շատ հետ են մնում վորակական հատկանիշները, նրանց կազմակերպչական դրությունը:

Հատկապես պետք ե նշել մեր պտղաբուծական տնտեսությունների անբավարար դրությունը մի շարք կազմակերպչական աշխատանքների գծով:

Տնտեսության յեվ աշխատանի կազմակերպումը՝ Արտադրանքի վորակի այդ կարևորագույն նախապայմանը գենսս չի ապահոված մեր պտղաբուծական տնտեսություններում թե խորհութեանությունների և թե ապրանքային ֆերմաների գնով: Այդ տնտեսություններում պտղատու այգիները գցվում են առանց պայմանների անհրաժեշտ ու բաղմակողմանի ուսումնասիրության: Մինչդեռ այդ մասին կա Հայաստանի Փողկոմիորհի վորոշումը՝ թե նախքան այդին տնկելը՝ տեղում պետք ե ամենամանրամասն

Պատ. իմբազիր՝ Ար. Յափաւյան

Սըբակրիչ և. Այվազյան

Հանձնված ե արտադրության 1934 թ. մայիսի 4-ին,

ստորագրված ե տպագրության 1934 թ. մայիսի 13-ին:

Դլավիս № 270, Պատվեր № 254, Տիբաժ 2000

Մեկ տղագր. թերթում 76,800 տառ տպ. նշ.

Ենթվան, ԳՅՈՒՂՀԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԼԱԼԲԱՆԴՅԱՆ և 50

հետազոտում կատարել, հաշվի առնելով տեղի հողային, կլիմա-  
յական պայմանները և վորոշել պտղատու տեսակներն ու սորտե-  
րը, տնտեսության զարգացման ուղղությունն ըստ առանձին տա-  
րիների, հաշվի առնելով միաժամանակ հողամասի կազմակերպու-  
մը, նրա յուրացումը, բանվորական ուժի պահանջը, բերքի իրաց-  
ման հսկավորությունները, յենթակա մասնաճյուղի զարգացումը,  
այսինքն՝ մի շարք շատ կարեր տնտեսագիտական պայմաններ,  
վորոնց հիման վրա յել պիտի կազմել տնտեսության զարգացման  
պլանն ըստ առանձին տարիների, Առանց այդպիսի բազմակողմա-  
նի ուսումնասիրության ու հիմնավորման չպետք ե թույլ տալ  
այնպիսի պտղաբուծական տնտեսություններ կազմակերպել, փո-  
րոնք դրադիում են բազմամյա բույսերի մշակությամբ, պահան-  
ջում են հսկայական կապիտալ ներդրումներ հետազա տասնյակ-  
տարիների համար:

Պետք ե նշել, վոր մեր նոր կազմակերպվող պտղաբուծական  
տնտեսություններում դեռ ես լրիվ չեն կատարված հողաշինարա-  
րական աշխատանքները, վորի պատճառով տնտեսության զար-  
գացման ասպարիզում թույլ են տրվում զդալի սիալներ:

Այս տարի մեր պտղաբուծական տնտեսությունները պետք  
ե ավարտեն հողաշինարարական աշխատանքները, առանց վորի  
անկարելի յե նրանց հետագա ուղիղ զարգացումը:

Մեր պտղաբանջարաբուծական տնտեսություններն ապա-  
հովված են անհրաժեշտ քանակությամբ տրակտորներով ու մե-  
քենաներով և պետք ե լրիվ որտափորձեն այդ մեքենաները, ա-  
պահովելով, նրանց համապատասխան վերանորոգումը:

Շատ հաճախ մեր պտղաբուծական տնտեսություններում  
անուշաղրության են մատնվում մանր կարեր գործիքների ոգ-  
տագործումն ու վերանորոգումը. դանակը, մկրատը, սղոցը, պետք  
ե ամենամեծ խնայությամբ գործածել և ապա վերանորոգել՝  
այսու հետագա աշխատանքների համար:

Աշխատանքի կազմակերպման ինսդիրները մեր պտղաբան-  
ջարաբուծական տնտեսություններում լուծելու համար պահանջ-  
վում են ամենալուրջ միջոցառումներ: Մշտական արտադրու-  
թիքական այդ տնտեսություններում պետք ե լինի աշխա-  
տանքի կազմակերպման հիմնական ողակը: Մինչդեռ մեր  
պտղաբուծական տնտեսություններում բանվորական ուժի կաղ-  
մակերպումը շատ հաճախ հարմարեցվում ե վոչ թե ծառասատան-  
ների մշակությանը, այլ նույն տնտեսության կողմանի ճյուղե-  
րին կամ միջարբային կուլտուրաներին (հացահատիկների, առ-  
գույնութիւնների ցանքին), իսկ հիմնական կուլտուրան պըտ-  
զատու ծառերն անուշաղրության են մատնվում:

Այս գարնանը հատուկ ուշադրություն պետք ե դարձնել  
բանվորական ուժի կազմակերպման վրա և վերջ տալ ինքնահո-  
սին այդ ասպարիզում, ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները  
պատղաբուծական տնտեսություններում պահպանելու մշտական  
բանվորական կազմը, բավարար պայմաններ ստեղծելու նրանց  
նյութական-կենցաղային ալահանջները բավարարելու համար, իսկ  
դրա համար առաջին հերթին պիտի ավարտել խորհրդականու-  
ներում սկզբան շինարարությունը, կազմակերպել սննդի գործը  
ահիմական տնտեսության աղբյուրներից:

Ազրոտեխնիկայի կիրառումը պատղաբանջարաբուծական տըն-  
տեսություններում դեռ չի գրավել մեր մտսնագիտների ու դեկավա-  
րող ընկերների անհրաժեշտ ուշադրությունը:

Ցեթե 1-ին հնդամյակում նոր յուրացվող հողերում (դոերում,  
Սարդարաբաղի շրջանում) մենք կարողացանք յուրացնել նորա-  
նոր տարածություններ, ապա վորակական հատկանիշներն այդ  
տնտեսություններում դեռ շատ ցածր են:

Հայտնի յե, վոր նախ քան ծառերը նոր յուրացվող հողերում  
տնկելը, պետք ե նախորոք պատրաստել հողամասը, ավարտել հա-  
տակագծումը, խոտաբույսեր ցանել, քամուց պաշտպանելու հա-  
մար պատճեններ տնկել համապատասխան բույսերից և հետո մի-  
այն սկսել այգետունները: Այդ նախապատրաստական աշխատանքը  
մեր անտեսություններում չի կիրառվում, տնկիները տնկվում են  
անպատրաստ հողամասում, չեն ստանում անհրաժեշտ խնամքը և  
թույլ զարգացման հետևանքով հաճախ տուժում են, մանավանդ  
ձմռան ցրտերից, մինչդեռ լավ պահպանված տնկիների վրա ձմռան  
ցածր ջերմաստիճանն այդքան բացստական ազգեցության չի  
ունենում:

Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել ծառերի անկման  
աշխատանքների վեա: Մեր այգիներում շատ հաճախ առողջ տնկի-  
ները նույնիսկ չեն կաչում, վորովհետեւ սխալ են տնկվում և  
նրանց նկատմամբ անհրաժեշտ խնամք չի տարվում: Մեր մի շարք  
խորհրդականություններում վերջին տարիներս այդ չկատած ծառերի  
տոկոսը շատ բարձր է (մինչև 30—40 %):

Նախ քան տնկելը պետք ե ամենառաջադիր կերպով կատարել  
տնկիների դասավորումն ըստ շարքերի այնպես, վոր ապահով-  
ված լինի նրանց գտածավորումն ըստ պտղաբուծական, պտուղնե-  
րի համառնացման ժամկետների, վոր ամենադիլիսավորնեա ըստ մի-  
մանց փոշոտման հնարավորությունների: Պետք ե հիշել, վոր

մեր պաղատու ծառերի մեծ մասն իր սեփական սորտի փողիով չի բեղմավորվում և անհրաժեշտ և ապահովել ծառերը փոշոտիչ սորտերով:

Սակայն մեր մի շաբթ տնտեսություններում ամբողջ հողամասում տնկում են մեկ սորտ, որինակ՝ «շալախ» ծիրան, վորը լավ աճում է, ծաղկում, բայց առանց ուրիշ սորտի փոշոտիչի չի պտղակալում: Այդպիսի որինակներ մենք ունենք կոնսերվատուրի և 1-ին սոլիստում, Սարդարաբարում, Փարաքարում, վորոնց սխալները չպետք են կրկնել այս գարնանը. այդ մասին կա պտղաբանաշարուծական կայանի կողմից մշակված հատուկ ցուցմունքներ, վորոնք պետք են պարտադիր կերպով կիրառել:

Գտրնան ծառատունկի համար տնտեսությունները պետք են ապահովեն բոլոր նախապատրաստական միջոցները—տնկիները խնամքով տեղափոխեն տնկարանից, մինչ տնկելը արմատները չչորացնեն, տնկման աշխատանքները հանձնարարեն միայն ուշադիր և այդ աշխատանքներին ծանոթ բանվորներին ու կոլտնտեսականներին, ապահովեն տնկիների ջրելն անմիջապես տնկելուց հետո, ինչպես և հետագա անհրաժեշտ խնամքը:

Այդ կիրառելով մենք կլանապաննեք տնկման աշխատանքների բարձր վորակը, խնայելով թանկարժեք տնկիները, հետարարեալ տասնյակ հազարներ մեր տնտեսություններում:

Տնկարանային արտադրությունը մեր պտղաբուծական տնտեսությունների ամենալուրջ, կարենը և ներկայումս Հայաստանի պայմաններում ամենահետամնաց կողմն ե:

Մեր տնկարանները Դարաքիլիսայում և Սարդարաբարում դեռ չեն արտադրում անհրաժեշտ ուժեղ, ստանդարտ ձեր և սորտի տնկիներ: Մինչդեռ տնկարանը խորհանությունների ու կոլտնտեսությունների ապահովային ֆերմաները պետք են ապահովի առողջ, ստանդարտ տնկիներով:

Տնկարանները պետք են գարնանից իրենց անտեսություններում կազմակերպեն անհրաժեշտ ցանքաշրջանառությունը, սերմերի ցանքը, նրանց բարձր խնամքը և հատկապես սրեն իրենց ուշադրությունը տնկիների ուղիղ ձեւվորման վրա, կիրառելով կառավարական վորոշումներով առաջարկած ուսցինալ ձեւվորումը—լիներային սիստեմով: Կոլտնտեսային պտղաբուծական ֆերմաների պահանջը լրիվ բավարարելու համար, մասնավանդ մեր, հեռագոր շրջաններում (Զանգեզուր, Պարագայագ, Մեղրի, Ղափան) չողֆոկումատի ու Պտղաբանջարաբուծական կայանի աջակցությամբ պետք են կազմակերպել կոլտնտեսային տնկարաններ:

Քաղաքամերձ տնտեսություններում, այս գարնանից հատկապես, պետք են սրել ուշադրությունը՝ հատապտուղային և գամաճ պտղատու բույսերի մշակության վրա:

Այսպիսով մեր առաջ դրված խնդիրները պտղաբանջարաբուծական տնտեսության կազմակերպման, նրա վորակի, բերքատվության բարձրացման ասպարիզում շատ մեծ են և մեր խորհանտեսությունների բանվորների ու կոլտնտեսականների ենատուղիազմով՝ կիրառելով կուսակցության ու կառավարության վորոշումներն այդ ասպարիզում, կապահովենք պտուղների և բանջարեղենների բարձր վորակը:

## Ա. ՅԱՓՈՒԶՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՊՏՂԱԲԱՆՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ԽՈՐՑՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորի. և կողեկտիվ տնտեսություններում աշխատանքի կազմակերպման հիմնական օղակը հանդիսանում է արտադրական բրիգադան:

(Համ. Կ (թ) Կ.)

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը պտղաբանջարաբուծական խորհրդ. և կոլտնտեսություններում հանդիսանում է անհրաժեշտ ու գլխավոր պայմանը, վորով հնարավոր և արագ կերպով լուծել կուսակցության կողմից առաջադրած խնդիրը, թե կոլտնտեսությունները պիտի դարձնել բոլշեվիկյան, կոլտնտեսականներին՝ ունեոր:

Ներկայումս կոլ. և խորի. տնտեսության շինարարության ասպարիզում աշխատանքի կազմակերպման ռացիոնալ և արտադրական ձեռը բըիգաղային ձեռն ե, իսկ բըիգաղային ամենալավ ձեռը մտշական արտադրական բըիգաղն ե:

Համ. Կ. (թ) Կ. 1932 թ. փետրվարի 4-ի պատմական վորոշումը նշում է, վոր մշտական արտադրական բըիգաղները գյուղատնտեսական բոլոր աշխատանքներում պիտի ունենան լրիվ աշխատանքի բենավածություն և պատասխանատու պիտի լինեն իրենց ամրացված հողամասի բոլոր աշխատանքների ժամանակին կտարարմանը. չողամասը բըիգաղին ամրացվում և վողջ ցանքաշրջանառության ժամանակաշրջանի համար, իսկ ճիշտ ցան-

քաղջանառությունը, ագրոկոմպլեկսի լրիվ կիրառման հետ միասին, ապահովում ե պայքարը մոլախոտերի զեմ, բանվորական ուժի, քաշող ուժի և մեքենաների ու գործիքների լրիվ բեռնվածությունն ու ճիշտ ոգտագործումը, միաժամանակ բարձրացնելով սոցիալիստական դաշտերի բերքատվությունը:

Մշտական արտադրական բրիգադն իր բոլոր աշխատանքների համար ստանալով մեքենաներ, գործիքներ, բանվորական և քաշող ուժ, պատասխանատու յի դառնում պլանային արտադրական առաջադրանքների, ինչպես քանակական, նույնպես և վորակական ցուցանիշների կատարման համար:

Պաղաբանջարաբուծական խորհունտեսությունների բանվորների բարձր աշխատավարձը և կոլտնափեսականների բարձր յեկամուտ ստանալով կախված է ինչպես ամբողջ բրիգադի, այնպես և նրայուրաքանչյուր առանձին անդամի կատարած աշխատանքի քանակից ու վորակից: Իսկ այդ բոլորը կախված ե բրիգադայի ներսում աշխատանքը ճիշտ կազմակերպելուց և ժամանակին հաշվառումից: Այստեղ կարեւը նշանակություն ունի նաև բոլոր սեզոններին աշխատանքով բեռնավորված լինելը, վորովհետև դա վերացնում ե բանուժի հոսունությունը և զիմազրկությունը, իսկ վորակեղ կադիմազրկություն ու հոսունություն, այնուղեղ աշխուժանում ե զամակարգային թշնամին, տանելով իր խըլուրդային աշխատանքը: Բրիգադի արտադրության բնույթի և աշխատանքի ծավալի համեմատ վորոշում ե բրիգադայի անդամների թիվը և հետո դասավորվում ուժերը բրիգադի ներսում, վորակեղ լուրջ ուշադրություն պիտի դարձնել փորձված և վորոշ աշխատանքներում մասնագիտացած ուժերի ճիշտ դասավորման և աշխատանքների բաշխման վրա: Փորձը ցույց ե տալիս, վոր հատկապես պահարանջարաբուծական տնտեսություններում, ժամանակակից այգեգործության տեխնիկայից և արտադրության պրոցեսի մեքենայացումից յենելով, բանվորների այն քանակը, վոր կարող ե ապահովել բրիգադին ամրացված հողամասի վողջ աշխատանքների կատարումը, պահաս չպիտի լինի 25—30 հոգուց, ի հարկե, նայած ճյուղին և բնույթին: Բրիգադի անդամների քանակը պիտի ապահովի ավելալ արտադրության բոլոր աշխատանքների կատարումը բոլոր սեզոններում, վորպիսին բլիսում և պլանից և բրիգադի առաջադրանքից: Մյուս կարևոր խնդիրը, դա բրիգադին ընտրությունն ե և նրա գերի բարձրացումը, վորպիս արտադրության կազմակերպչի: Դրա հետ միասին պետք ե պայքարել բրիգադների շուտ շուտ փոփոխման պրակտիկայի դեմ,

վորպիսին զեր շարունակվում ե մեր մի շարք տնտեսություններում: Բրիգադիրը պիտի ընտրվի այնպիսի կոլտնտեսական, վորությանակելի յե իր բոլոր աշխատանքներում, կարողանա տիրապետել աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման տեխնիկային, կարողանա ճիշտ ու ժամանակին կատարել աշխատանքների հաշվառումը և ժամանակին պրանցել աշխատական կանոնը կոլտնտեսականների աշխատանքներում կատարել աշխատական կանոնը կուտանական շատ աշխատական արտադրանշից: Հատկապես պաղաբանջարաբուծական տնտեսություններում բրիգադիրը պիտի լինի փորձառու և վորոշ զովով մասնագիտացած կոլտնտեսական, վորովհետև այս ճյուղի մասնագիտական աշխատանքներն ավելի շատ են ու ղեկավարման տեսակետից համեմատարար ավելի գծվար: Մշտական արտադրական բրիգադին ամբացվում ե վորոշ քանակի հոգամասները կուլտուրաներով, պահանջվում ե պլանով նախատեսնված արտադրանքը, իսկ այդ կատարելու համար անհրաժեշտ է այդ բրիգադային տալ պահանջվող քանակի քաշող ուժ, գործիքներ և անամրաժեշտ նյութեր:

Ներկայումս քաշող ուժը մեծ տեղ է զրավում կու. և խորհրդական արտադրության մեջ, վորի մասին, շատ ճիշտ կերպով նշել ե ընկ. Վորոշիլով 17-րդ կուս. համազումարում: «Գյուղատնտեսության մեջ զեր կան աշխատանքի մի շարք բնագավառներ, վորակեղ կենդանի քաշող ուժի գերը մեծ ե և հատկապես ձին յերկար ժամանակ մնալու յի տրակտորի հավատարիմ ընկերը»: Եթա համար անհրաժեշտ ե, վոր կու. վարչություններն ու խորհունտեսությունների ղիսեկտորներն ել ավելի լուրջ ուշադրություն զարձնեն կենդանի քաշող ուժի խնամքի—ոգտագործման վրա: Քաշող ուժը կցելով բրիգադներին, պիտի ավելի սրել պահանջանառատվության խնդիրը՝ նրանց խնամելու և ոգտագործելու տեսակետից:

Ճիշտ կերպով բանվորներով ու քաշող ուժով կոմպլեկտավորված բրիգադական, վորն ապահովված ե նաև գործիքներով ու անհրաժեշտ նյութերով, պիտի ունենա իր աշխատանքների որացուցային պլանն ամբողջ տարգա համար:

Պահանջ ցույց պիտի տրված լինի արտադրական առաջազրանքը, աշխատանքի ծավալը, արտադրական նորմաները, առանձին նյութերի ծախսման նորմաները, ստացվելիք ընդհանուր յեկամուռը, ագրոտեխնիկայի կիրառման ժամկետները, պարագատացումը և այլն, և այլն:

Ցերեկն պահանջարարուծական տնտեսություններում բանութը կ քաշող ուժը բրիգադների մեջ բաշխելիս, մեխանիկական մոտեցում են ունենում և ուժերը բաժանում են հավասար ըստ

բրիգադների: Հետևանքը լինում է այն, վոր աշխատանքների լեռ ոռու շրջանում բրիգադներում ստեղծվում ե ուժերի անհավասար բեռնվածություն—մեկ բրիգադում աշխատանքի լարվածություն, բան. և քաշող ուժի անհամեմատ մեծ պահանջ, մյուս բրիգադում հակառակը, ուժերի պարապուրդ և իրավացի գդունություն: Այդ ժամանակ դիրեկցիան կամ վարչությունը ստիպված են լինում մի բրիգադից ուժերը տեղափոխել մյուս բրիգադը, իսկ այդ հաճախակի փոփոխություններից առաջանում ե դիմագրկություն, հոսունություն, արտադրողականության անկում և մի շարք այլ բացառական յերեսույթներ, վորս կոպիտ կերպով խախտում ե պրոլետարիատի հանձարեղ առաջնորդ ընկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքները: Նման գրությունն ոգտագործելով՝ դասակարգային թշնամու վերջին մնացորդների թափթփուկներն իրենց աղդեցության տակն են գցում դասակարգային զգոնությունը բթացած անձնավորություններին և վերջին ճիգերը թափելով՝ կազմակերպում են զանազան վնասարարական ու հականեղափոխական աշխատանքներ:

Վերոհիշյալ յերեսույթներն արմատախիլ անելու համար անհրաժեշտ ե բան. և քաշող ուժերի բաշխման ժամանակ ճիշտ և ոյցեկանիվորեն հաշվի առնել ամեն մի բրիգադի աշխատանքի ծառակալը, բնույթը, բանուժի պահանջը, բանվորների մասնագիտացումը և դրանց բեռնվածությունն աշխատանքի բոլոր սեղոններում ըստ բրիգադների մասնագիտության:

Սոցիալիստական անտեսությունները կազմակերպչորեն ու անտեսապես ամրացնելու և աշխատանքային դիսցիպլինան ել աշխատավոր բարձրացնելու խնդրում, խոզոր նշանակություն ունի նաև բրիգադներում գործափարձի ճիշտ կազմակերպումը: Դործավարձը պաղաբուծական անտեսություններում ճիշտ կլինի այն զեպօւմ, յերբ ճիշտ մշակած կլինին արտադրական նորմաները, ժամանակին ու ճիշտ հաշվի առնված կլինին կատարված աշխատանքները, ստուգած վրակը, և ժամանակին գրանցված կլինի համապատասխան գրքույկներում, վորպեսզի ամեն մի աշխատավորի համար պարզ վնի իր կատարած աշխատանքն ու իրեն հասանելիքը (կոլտնտեսականի համար՝ աշխարհը, իսկ խորհանտեսության բանվորի համար՝ աշխատավարձը): Այդ բոլորն ավելի մեծ շահագրգուվածություն են առաջացնում աշխատաղների մեջ և նըանք ավելի ջերմ կերպով ու յեռանդով են լծում պահանների կատարման-գերակատարման գործին, բարձրացնելով իրենց աշխատանքի արտադրողականությունը, միաժամանակ ել ավելի յի ուժեղանում պայքարը լողիքի ուժուականությունը և ճրիակերների զեմ:

Աշխատանքի կազմակերպման ժամանակ հարկավոր ե մեծ ուշադրություն դարձնել արտադրական նորմաների ճշտման վրա այնպիս, վոր այն բղիքի տվյալ արտադրության կոնկրետ պայմաններից և տեղի չունենա աշխորերի ու դրամական միջոցների շըռայլում, վորը մեծապես ազգում ե ինքնարժեքի իջեցման ու արտադրողականության վրա և խփում անտեսության ամրացմանը:

Հարկավոր ե յեղած արտադրական նորմաները անտեսություններում ակտիվի խորհրդակցություններում քննության առնել մտնրածառնորեն, յենեռով առանձին աշխատանքների կոնկրետ պայմաններից և ՄՏԿ-ների ու հողբաժինների կողմից հաստատելուց հետո միայն կիրառել: Պաղաբանը որաբուծական տընտեսություններում աշխատանքները կազմակերպելու հաջողության գրավականը հանդիսանում ե՝

(Ա.) աշխատանքի սոցիալիստական ձեռքի: (սոց. մրցում, հարվածայնություն և այլն) ծավալումը բրիգադում—ցեխում, ողակում և առանձին անդամների միջև, վորպեսին պիտի դառնա յուրաքանչյուր աշխատանքություն:

(Բ.) համաշխարհային պրոլոտարիատի հանձարեղ առաջնորդը ընկ. ՄՏԱԼԻՆԻ պատմական վեց ցուցումների ճիշտ կիրառումը և վերջապես ամենույա համառ պայքարը կուլակալին-յենթակուլակային տարբերի, լողիքերի և սիմուլյանտների զեմ: Սբանց հաջող կատարումով կապահովենք յերկրորդ հնգամյակի բոլշևիկյան յերկրորդ գարնանացանի պլանների ել ավելի հաջող կատարումը:

ՀԱԿՈԲՅԱՆ ՊԱՐԵՎ, ԵԽՎ,  
ԳՅՈՒԶՈՒՅԱՆ ԿԱՐՈ

## ԹՏՎԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԴԱՍՎԱՐՈՐՈՒՄՆ ԱՅՉՈՒՄ

Պաղատու ծառերի բերքատվության բարձրացումը ներկայիս ամենակարենը խնդիրներից մեկն ե, վոր դրված ե մեր խորհություններությունների ու կոլտնտեսությունների առաջ:

Այդ խնդիրը հաջող լուծելու համար պետք ե ծեռնարկել մի շարք միջոցներ, վորոնք կիրառվելու յեն տնկված հին և նոր տնկվելիք այգիներում:

Բերքատվությունը բարձրացնելու ձեռնարկումներից ամենակարենը և տեսակների ու սորտերի ճիշտ ընտրություն կատարելն ու դասավորելը կողամասում: Պաղատու ծառերի մեծ մասն

ինքնարեղմանավորման յենթակա չեն: Որինակ՝ Շալախ ծիրանից նորմալ բերք ստանալու համար, նա պիտի փոշոտված լինի Թագարդայով, Գյոդշնաբաթով, Արութալիբով կամ այլ սորտերի փոշով: Ցեղել են գեղքեր, յերբ մի սորտից բաղկացած այգիներն անբերք են մնացել: Ամերիկայում տնկված ե յեղել մի այգի, վորի մեջ ծառերի մեծագույն մասը տանձնենու մեկ սորտ ե յեղել, այդ այգին, չնայած լավ և մշակվել, բայց յերկար տարիների ընթացքում ծաղկել ե ու բերք չի տվել, մինչև վոր այնահետ տնկել են մի քանի այլ սորտի ծառեր:

Անցնելով խոշոր սոցիալիստական արդյունաբերական պրադարձությանը (սահմանափակված ստանդարտ ասորտիմենտով), անհրաժեշտ ե ալգիների ծառերն ապահովել համապատասխան փոշոտիչներով, վորոնց ուսցիունալ գասավորումով և արդյունաբնիկական միջոցառությունների կիրառումով կարելի յե ապահովել բարձր բերքատվությունը:

Չնայած ծառերի վորոշ տեսակներն ու սորտերը ինքնարեղմակորման յինթակա յեն, բայց խաչածն փոշոտման դեպքում ավելի բարձր բերք են տալիս. յիշների այս ամենից—պատղառու այլին գցելիս պիտք ե մտցնել համապատասխան իրար փոշոտող մի քանի փոփոխակներից բաղկացած կոմբինացիաներ:

Փոշոտիչները՝ պետք ե բավարարեն հետեւյալ պահանջներին:

1. Վոչ միայն պիտք ե լավ փոշոտեն հիմնական սորտը, այլ և իրենք իրենց հերթին պիտք ե փոշոտվեն հիմնականով, հակառակ դեպքում փոշոտիչները բերք չեն տա:

2. Հիշված սորտերի համար լրիվ ծաղկման շրջանը պիտք ե լինի միաժամանակ, այլապես փոշոտումը տեղի չի ունենա:

3. Սորտերի ծաղկման տարիները պետք ե նույնպես համընկնեն, հակառակ դեպքում բերքատվությունը կընկնի:

Հայտնի յե վոր ծառերի պտղաբերությունը լինում ե պարբերաբ, այն ե՝ մեկ տարվա կամ մի քանի տարիների հաջող բերքին հաջորդում ե թույլ բերքատվությունը և այդպես շրջառնակ:

Ցեղել հիմնական սորտը դանդում ե հաջող տարվա շրջանում, իսկ փոշոտիչը վոչ, այդ գեղքում վերջինս հնարավորություն չի ունենում փոշոտումն ապահովելու և զրա հետեւնքով բերքատվությունը ցածը ե լինում:

4. Ընտրած սորտերի բերքատվությունը պիտք ե սկսվի մինչույն հասակում. ուշ և շուտ բերքատու սորտերը չեն կարող իրար համար փոշոտիչներ համարվել, վորովհետեւ շուտ բերք տվող սորտը չի փոշոտվի, մինչև վոր ուշ բերք տվողը չծաղկի, միաժամանակ՝ շուտ բերք տվողներն ընդհանրապես ավելի կարճատեղանք ունեն, իսկ ուշբերք տվողները յերկարակաց են:

Այդ պատճառով 40—50 տարուց հետո, յերբ առաջին սորտն արդեն ծերության պատճառով սկսում ե չորանալ, 2-րդ տորտը, վորը գեռ 20—30 տարի կարող ե շարունակել բերքատվությունը, մնալու յե առանց փոշոտիչի—ուրեմն և առանց բերքի:

Այդպիսի անհաջող կոմբինացիաների որինակ կարող ե համարվել Շամպանի Ռինեստը և Կանդիլ սինապը, վորոնցից առաջինը պաղարիրում է 5—6-րդ տարում, իսկ յերկորդը 13—15 տարում:

Շառերը դասավորելու ժամանակ հարկավոր ե ապահովել մի կողմից լավ փոշոտումը, իսկ մյուս կողմից՝ աշխատանքի կազմակերպումը: Այդ պատճառով սորտերը դասավորվում են շարքերով, աշխատելով ամեն մեկ սորտին հատկացնել մի քանի շարք: Շարքերի քանակը 6-ից ավելի չպիտի լինի, այն ել այն ծառերի համար, վորոնք տնկվում են 6—7 մետր հեռավորության վրա, իսկ վորոնք տնկվում են 10 մետրի վրա 4—5 շարք պիտի լինեն:

Հարկավոր ե միաժամանակ հիշել, վոր լավ փոշոտումն ապահովվում ե այն ժամանակ, յերբ այգում կան մեղուներ, այդ պատճառով հանձնարարվում ե այն բոլոր տնտեսություններին, վորոնք միջ միջ տարածությամբ պտղատու այգիներ ունենա հնարավորության սահմաններում ունենալ նաև մեղվանոց, կամ հակառակ դեպքում, գոնե ծաղկման շրջանում, պայմանավորվել մեղվապահների հետ, վոր իրենց փեթակները բերեն այգին:

Շառերի լրիվ փոշոտումը բարձր բերքատվության հիմքն ե. ով աչքաթող ե անում այդ խնդիրը, նա վասարարական գործ ե կատարում—իջեցնելով մեր սոցիալիստական տնտեսությունների այգիների բերքատվությունը:

5. Փոշոտիչ սորտը պետք ե մտցնել ստանդարտ ասորտիմենտի մեջ, վորպեսզի հողամասն օգտագործվի ուսցիունալ ձեռվ:

6) Յանկալի յե փոշոտիչը և փոշոտվողը միենույն կամ մոտիկ հասունացման ժամանակաշրջան ունենան, վորպեսզի խնամքը և բերքահավաքը հեշտացվի. ամառային սորտը պետք ե ունենա համապատասխան հասունացում ունեցող փոշոտիչ, որինակ խնձորների սորտերից Պապիրովիկան և Դլովերովիկան: Բանի վոր սորտերի բոլոր հատկությունները չայսատանի պայմաններում լրիվ ուսումնասիրված չեն, պետք ե համարել անթույլատելի նույն հողամասում տնկել միայն յերկու սորտ: Անհրաժեշտ ե մինչույն հողամասում տնկել 3—4 փոխադարձ լավ փոշոտող սորտեր, այլապես բերքատվությունը լրիվ չի ապահովվի: Սորտերի դասավորման ժամանակ կարող ենք պատահել մի քանի դեպքերի:

1. Յերբ փոշոտվողը և փոշոտիչը հավասար  $0\frac{1}{2}$ -ով են վերցրած: Այդ դեպքում կարելի յե դասավորել 4—5 շաբք մի սորտից, վորոնց հաջորդում են 4—5 շաբք 2-րդ սորտից, հետո յերբորդ և այդպիս շարունակվում են:

Որինակ՝ 4 շաբք Ռենհատ Սիմիրենկո

4 շաբք Վոսկե Պարմին  
4 շաբք Լանդուբերգի

2 դեպէ, յերբ փոշոտողն անհավասար  $0\frac{1}{2}$ -ով ե լինում, այդ գեղքում շարքերի քանակը պիտի համապատասխանի սորտերի հետեւյալ  $0\frac{1}{2}$ -ային հարաբերությանը (տես սիմենտան):

+ 0 0 —	+ 0 0 —	25 $\frac{0}{0}$ Սիմիրենկո (+)
+ 0 0 —	+ 0 0 —	50 $\frac{0}{0}$ Պարմին (○)
+ 0 0 —	+ 0 0 —	25 $\frac{0}{0}$ Լանդուբերգ (-)
+ 0 0 —	+ 0 0 —	

Նման որինակներ կարելի յե շատ բերել. սխեմայի ընտրությունը կախված ե տվյալ տնտեսության ասորտիմենտից:

Այսպիսի դասավորումները հնարավորություն են տալիս բերքահավաքի և խնամքի ժամանակ աշխատանքը ճիշտ կազմակերպել:

Ի նկատի ունենալով, վոր պատղատու ծառը հանդիսանում ե բաղմամյա կուլտուրա և այն սխալը, վոր կատարվում ե այդին անկելու ժամանակ, անդրադառնում ե յերկար տարիների ընթացքում, պետք ե շատ զգուշ լինել սորտերի ընտրության գործում և նրանց դասավորումը ճիշտ կատարելու նւարի առաջարկվում ե բոլոր տնտեսություններում ստույգ հետեւել Պաղաբանջարարութական Կայանի կողմից մշակված և համապատասխան մարմինների կողմից հաստատված Հայաստանի շրջանների ստանդարտ ասորտիմենտի:

Հրամիրում ենք տնկարանների մտսնագետների ուշադրությունը՝ համապատասխան տնկիններով ապահովելու արտադրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՈՐՏԻՄԵՆՏԻ ՓՈՇՈՒՉՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

ՓՈՇՈՏՎՈՂՆԵՐ

Խճանքեր

Անտոնովկա

Բայկեն

Բորովինկա, Գլոգերովկա, Պալիրովկա, Զըմենվա Վոսկե Պարմին:

Գլոգերովկա, Ռ. Սիմիրենկո, Ռ. Լանդուբերգ, Ռ. Կասելսկի, Ռ. Որլյանի, Զմենվա Վոսկե Պարմին, Պալիրովկա, Լոնդոնի, Բելֆույոր, Բ. Ռուսկի, Ռ. Սիմիրենկո, Ս. Սիմիրենկո, Ս. Շամպանի:

Բորովինկա

Գլոգերովկա

Պալիրովկա

Զմենվա Վոսկե

Պարմին

Պեպին Լանդոնի

Ռ. Կասելսկի

Ռ. Լանդուբերգ

Ռ. Որլյանի

Ռ. Սիմիրենկո

Ռ. Շամպանի

Ռ. Կասելսկի

Բելֆույոր

Ռ. Կոկս

Տանձ

Իլինկա

Սիրելի Կլապկա

Անտոնովկա, Գլոգերովկա, Պալիրովկա, Բել

Փյուր:

Պալիրովկա, Բոյկեն, Ռ. Լանդուբերգ, Անտոնովկա, Զմենվա Վոսկե Պարմին, Պալիրովկա, Լոնդոնի, Բ. Սիմիրենկո, Ռ. Շամպանի: Բորովինկա, Ռ. Լանդուբերգ, Գլոգերովկա, Ռ. Սիմիրենկո, Ս. Սիմիրենկո, Ս. Անտոնովկա, Զմենվա Վոսկե Պարմին, Բոյկեն:

Բոյկեն, Գլոգերովկա, Պալիրովկա, Լոնդոնի, Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Ռ. Շամպանի, Բելֆույոր, Զմենվա Վոսկե Պարմին, Պալիրովկա, Բ. Սիմիրենկո, Ռ. Շամպանի:

Բոյկեն, Գլոգերովկա, Զմենվա Վոսկե Պարմին, Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Պալիրովկա:

Բոյկեն, Գլոգերովկա, Զմենվա Վոսկե Պարմին, Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Պալիրովկա:

Բ. Սիմիրենկո, Ռ. Ենիսեյ Շամպանի, Բելֆույոր: Բոյկեն, Գլոգերովկա, Զմենվա Վոսկե Պարմին, Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Պալիրովկա:

Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Պալիրովկա:

Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Պալիրովկա:

Բ. Կասելսկի, Ռ. Անդրաբերգ, Ռ. Որլյանի, Ռ. Սիմիրենկո, Պալիրովկա:

Ալեքսանդրովկա:

Իլինկա, Ամառվա Վլյամս, Բելֆրուսկ, Սեմերմեն, Բերեհարդենալոն, Զմենվա Դեկանկա, Դյուշեն:

Ամառվա Վիլամս  
 Բերեբոսկ, Կլապվա, Սենժերմեն, Կյուրե,  
 Բերեհարդենպոն:  
 Բերեբոսկ, Կլապվա, Վիլամս, Սենժերմեն,  
 Կյուրե, Բերեհարդենպոն, Զմեռվա Դեկանկա:  
 Ամառվա Վիլյամս, Կլապվա:  
 Բերեբոսկ, Կյուրե, Բերեհարդենպոն, Զմեռվա  
 Դեկանկա, Ամառվա Վիլյամս, Կլապվա:  
 Բերեբոսկ, Սենժերմեն, Բերեհարդենպոն,  
 Դյուշես Դանգուլեմ, Զմեռվա Դեկանկա,  
 Կլապվա, Ամառվա Վիլյամս:  
 Բերեբոսկ, Սենժերմեն, Կյուրե, Սեյանեց Կի-  
 ֆերա, Զմեռվա Դեկանկա, Կլապվա, Ամառ-  
 վա Վիլյամս:  
 Ամառվա Վիլյամս:  
 Սենժերմեն, Հարդենպոն, Սեյանեց Կիֆե-  
 րա:  
 Բերեբոսկ, Սենժերմեն, Բերեհարդենպոն,  
 Կլապվա, Ամառվա Վիլյամս:  
 Մալաչա  
 Շաքարի  
 Լատանձի  
 Զագանատանձ  
 Զմեռնուկ  
 Աշնան սինի  
 Բերե-Ամանի  
 Իզիլ արմուդ  
 Խթթղի տանձ  
 Կեռասենի  
 Դեղին Դրոգանա  
 Դեղին Դենիսենա  
 Վաղահաս Մարկի  
 Դրույա  
 Ան Նապոլեոն  
 Ան Թրքական

Փոշոտիչներն ստուգված չեն

Գրոյա, Ձրենսիս, Վաղահաս Մարկի:  
 Դրոգանա Դեղին, Ձրենսիս, Գրոյա, Վա-  
 ղահաս Մարկի:  
 Գրոյա, Ձրենսիս, Դենիսենա Դեղին:  
 Դրոգանա Դեղին, Վաղահաս Մարկի, Դենի-  
 սենա Դեղին, Ձրենսիս:  
 Դրոգանա Դեղին:  
 Դրոգանա Դեղին:

Յըենսիս  
 Ուամոն Ուիվա  
 Ուայոյի Գեղեցկուհին  
 Գին Մայիսյան  
 Շուշա Գիլաս  
 Թանաքեռի Գիլաս  
 Տեղական  
 Բ ա լ  
 Վլադիմիրսկայա  
 Լյուբսկայա  
 Անադոլսկայա  
 Շպանսկայա  
 Տեղական  
 Նիրաններ  
 Շալախ  
 Գյոզջանաբաթ  
 Թաբարզա  
 Խոսրովշահի  
 Աբութալիբի, Թաբարզա, Շալախ,  
 Գյոզջանաբաթ:  
 Աբութալիբի, Թաբարզա, Շալախ:  
 Թաբարզա, Խոսրովշահի, Շալախ, Գյոզջանա-  
 բաթ:  
 Հանքան  
 Գյոյ Բաղամ  
 Կարմիր Նախիջևանի  
 Սարի Բաղամ  
 Բալ Յուրիմի  
 Խարջի  
 Սոլորներ  
 Դեղձային  
 Ռենգլոս Ալտանա

Դենիսենա Դեղին, Կանաչ Ռենգլոս, Միրաբել Նան-  
 սի, Աննա Շպետ, Բալական Վենդիրկա,  
 Վիկտորիա, Սովորական Վենդիրկա:  
 Փոշոտիչներն ստուգված չեն:  
 Կիրկ  
 Դեղձային, Կանաչ Ռենգլոս, Միրաբել Նան-  
 սի, Աննա Շպետ, Բալական Վենդիրկա,

Ռենդուտ կանաչ

Դեղձային, Ռենդուտ Ալտանա, Իտալական  
վենդերկա, Վիկտորիա, Սովորական վեն-  
դերկա:

Միքարել Նանսի

Վենդերկա Իտալական, Միքարել Նանսի:

Աննա Շպետ

Դեղձային, Ռենդուտ Ալտանա, Կանաչ Ռեն-  
դուտ, Աննա-Շպետ, Իտալական Վերգերկա:

Իտալական Վեն-  
դերկա

Դեղձային, Կանաչ Ռենդուտ, Աննա Շպետ,  
Իտալական Վենդերկա, Կիրկ, Ռենդուտ Ալ-  
տանա, Սովորական Վենդերկա:

Վիկտորիա

Դեղձային, Կանաչ Ռենդուտ, Աննա Շպետ,  
Իտալական Վենդերկա:

Սովորական Վեն-  
դերկա

Կանաչ Ռենդուտ, Աննա Շպետ, Իտալական  
Վենդերկա:

Ալիբուխարա

Կանաչ Ալի

Իսպահան

Կանաչ Ալի

Դիբկ

Ֆազիլ Ալի

Յապահան

Կանաչ Ալի

Դիբկ

Յայ-Մալասի

Դարալազյազի Տեղա-  
կան

Ֆոշուիչները չեն ստուգված:

Ճանձուր

Ֆոշուիչները չեն ստուգված:

Մեղրու Ալիբուխարա

Դեղնաշլար

Տեղական

Դիլիջանի Մամուլի

Ինչ վերաբերվում ե դեղձենիներին, նրանք բոլորն ել ինք-  
նափոշտման յենթակա յեն, բայց խաչաձեի դեպքում ավելի լավ  
արդյունք են առաջի, վորոնց հաջող կոմբինացիաները լրիվ ու-  
սումնասիրված չեն:

ԴիլանՅԱՆ ՅԵԿ ՍԱՆԱՀՅԱՆ

## ԳԱՐԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԹՏՂԱՏՈՒ ԱՅՉՈՒՄ

Պտղատու այգիների բերքի բարձրացումը և նրանց յեր-  
կարակյաց դարձնելը, ներկայումս մեր անհրաժեշտ խնդիրներից  
միկան ե:

Մեր պայմաններում ժողովրդական սննդի, կոնսերվի ար-  
դյունաբերության և հկուղորտի պահանջները բավարարելու գոր-  
ծում, մինչև նոր այգիների պտղաբերելը, հին այգիների նշանա-  
կությունը շատ մեծ ե:

Հին պտղատու այգիների մեծ մասը չատ փոքր են և ցաք  
ու ցրիվ, վորը և դժվարացնում ե բոլոր անհրաժեշտ ագրոձեռ-  
նաբերումներն անցկացնելը: Սակայն այդ արգելք չպետք ե հան-  
գիսանա: Պտղատու այգիների բերքի բարձրացման համար ան-  
հրաժեշտ ե կիրառել մի շարք ագրոտեխնիկական ձեռնարկումներ:

Վորոնք են այդ անհրաժեշտ ագրոտեխնիկական ձեռնար-  
կումները:

1. Այգու տակ յեղած հողի մշակությունը:

2. Զորացած և կիսաչորացած ծառերի (վակորչեցնելու)

3. Անբուժելի, հիվանդ, չորացած և կիսաչորացած ճյուղերի  
հեռացումը:

4. Հիմնական ճյուղերի և բնի մաքրումը մեռած կեղեից,  
քար ու քոսից և մամուռից:

5. Սաղաբթի նոսրացումը:

6. Ծառի բնի և սաղաբթի սրսկումը կամ բնի և հիմնական  
ճյուղերի ծածկումը կրով:

Կանգ առնենք այդ ագրոձեռնարկումներից յուրաքանչյուրի  
վրա առանձին:

## 1. ԱՅՉՈՒ ՏԱԿ ՅԵԿԱԾ ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

Քանակով շատ ու վորակով բարձր բերք ստանալու և պտղա-  
տու ծառի նորմալ կյանքն ապահովելու համար անհրաժեշտ ե  
այդու տակ յեղած հողը մշակել և նորմալ պայմաններ ստեղծել  
արմատների գործունեցության համար, քանի վոր բույսն իր ար-  
մատների միջոցով վերցնում ե հողից բոլոր անհրաժեշտ սննդա-  
րար նյութերը:

Դրա համար հողի մշակման միջոցով պետք ե նրա մեջ  
կուտակել անհրաժեշտ քանակությամբ սննդանյութ և խոնավու-  
թյուն: Այդ նպատակով անհրաժեշտ ե աշնանը բերքը հավաքե-

լուց անմիջապես հետո այգու հողը գութանով հերկել 15—20 սմ. խորությամբ, իսկ այն փոքր տարածությունը—վորը բնիմում ե առանց հերկելու և վորն անհնար և գութանով հերկել, հարկավոր և նույն խորությամբ փորել բաների միջոցով, բայց շատ դուշ, վորպեսզի ծառի արմատները չվնասվեն:

Աշնանը հերկված հողամասը թողնում են առանց փոցխելու մինչև պարուն, վորպեսզի նա ողափոխվի, խոնավություն կուտակի: Իսկ վաղ գարնանը, հենց վոր ձյունը հալվում և և հողը մի քիչ չորանում, հարկավոր և անմիջապես փոցխել:

Յեթե աշնանը հողը մի վորեև պատճառով հերկված չի յեղել, ապա անհրաժեշտ ե հերկը կատարել վաղ գարնանը, ձյունը հալվելուց և հողի քեցը գալուն պես:

Վարից անմիջապես հետո հարկավոր և փոցխել գիսկավոր կամ զիջզագ փոցխով՝ հարթեցնելով հողի մակերեսը:

Ամառվա ընթացքում հողը պետք ե պահել փուխր վիճակում, դրա համար հարկավոր և այգին ջրելուց և ուժեղ անձրենքից հետո հողը կուլտիվացիայի (փխրեցում) յենթարկել Յեթե այդ չարքի, հողը կամրանա և տեղի կունենա ուժեղ գոլորշիացում և կը զարգանան քաղմատեսակ մոլախոտերը:

Բացի հողի մշակությունից, հարկավոր և նաև այգու տակ յեղած հողը պարարտացնել, տուաջին հերթին վորպես պարարտանութեան հարկավոր և ոգտագործել այն տեղական պարարտանութերը, վոր կան տնտեսության մեջ, որինակ, գոմակը, տնտեսութերը, վոր կան տնտեսության մեջ, որինակ, գոմակը, տնտեսության մեջ հավաքված թափթփութերը (КОМПОСТ), մոխիր և այլն. կարելի յե ոգտագործել նաև հանքային պարարտանութերը՝ գրւխավորապես ազոտային, ֆոսֆորային և կալի. բոլոր տեսակի պարարտանութերը հարկավոր և հողի մեջ մտցնել մշակման հետ միաժամանակ:

Պարարտանութերը հավասարաչափ ցրում են հողի մակերեսին, ապա հերկում 12—15 սմ. խորությամբ:

Պարարտանութերը կարելի յե հողի մեջ մտցնել աշնանը կամ գարնանը:

## 2. ԶՈՐԱՑԱՇ ՄԱՐԵՐԻ ԽՈՏԱՆՈՒՄԸ (ՎԱԿՈՐՉԵՎԿԱ)

Յեթե պտղատու այգում կան չորացած կամ կիսաչորացած հիլանդ ծառեր, վորոնց բուժումն անկարելի յե, ապա հարկավոր և այգպիսիները խոտանել, տեղն ու տեղն այրել կամ այգուց

Այդպիսի ծառերից մենք վոչ մի ոգուտ չունենք բացի վորովհետև նրանք այգում մնալով, զանազան հիվանդությունների և միջատների բուն են դառնում և վարակում են առողջ ծառերն ու իջեցնում բերքի քանակն ու վորակը:

## 3. ԱՆԲՈՒԺԵԼԻ ՀԻՎԱՆԴ, ԶՈՐԱՑԱՄ ՅԵՎ ԿԻՍԱՋՈՒԱՑԱՄ

Մեր այգիներում համարյա վոչ մի ուշաղրություն չի դարձվում ծառի սաղարթի խնամքի վրա, վորի հետևանքով ծառերի սաղարթը գտնվում և շատ վատ վիճակում—ունեն շատ չորուկներ, կոտրված և հիվանդ ճյուղեր:

Այս բաղրը հետևանք և շատ ուժեղ ստվերի, ցրտահարության, տարբեր տեսակի հիվանդությունների ու վնասատուների և վոր կարևորն ե, մեր անփույթ և անինամ վերաբերմունքի:

Այսպիսի հիվանդ, չորացած և վնասված ճյուղերն անհրաժեշտ և անմիջապես կարել-հետացնել այգուց, կամ այրել:

## 4. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՅԵՎ ԲՆԻ ՄԱՐԵՐՈՒՄԸ ՄԵՌԱԾԿԵՂԵՎԻՑ, ՔԱՐԱԲՈՒՄԻՑ (ԼԻՇԱЙՆԻԿՈՎ) ՅԵՎ ՄԱՄՈՒՌԻՑ

Ծառի յերկարակնցությունը խոշոր չափով կախված ե բնի և հիմնական ճյուղերի կեղևի ամուր և առողջ լինելուց:

Ծառի կեղևը տարեց տարի հնանում ե, աստիճանաբար նրա արտաքին շերտը մեռնում ե:

Հին, մեռած շերտերում, վորոնք գտնվում են ծառի բնի և հիմնական ճյուղերի վրա, լինում են բազմաթիվ ճեղքվածքներ, ուր բուն են դնում զանազան հիվանդությունները և վնասատուները, վորոնք հետագայում մնանում են նոր առաջացած կենդանի շերտերին:

Այս իսկ պատճառով անհրաժեշտ և ամեն տարի ծառի կեղևը մաքրել մեռած մասերից, նորմալ պայմաններ տալով ծառին նրա անեցողության և զարգացման համար:

Կեղևի մաքրումը լավ է կատարել աշնանը, տերեւաթափից հետո, իսկ յեթե այդ աշխատանքն աշնանը չի կատարված, ապա անհրաժեշտ է կատարել վաղ գարնանը:

Այդ աշխատանքը կատարվում և հատուկ գործիքների միջոցով. հավաքված մեռած կեղեսին անմիջապես մեղոկներով դուրս ե հանվում այգուց, կամ տեղն ու տեղն այրվում, վորպեսզի այգին ապահովված լինի նոր վարակումներից. կեղեվի մաքրումը նպատակահարմար է կատարել խոնակ ժամանակ—անձրւներից

հետո, կամ անմիջապես ձյունը հալվելուց հետո, վորովհետև այդ ժամանակ ծառի կեղեց լինում ե փափուկ և ավելի հեշտ ու լավ է կատարվում այդ աշխատանքը:

### 5. ԱՍԴԱՐԹԻ ՆՈՄՐԱՅՈՒՄԸ

Սաղարթի նոսրացման աշխատանքների վրա ահրաժեշտ ե լուրջ ուշադրություն դարձնել, վորովհետև գլխավորապես սրանից և կախված բերքի քանակն ու վորակը: Մեզ մոտ գոնե այս աշխատանքը համարյա չի տարվում և այդիները մատնված են ինքնահոսի, այդ պատճառով բերքը լինում է չնշին քանակով և ցածր վորակով:

Եաւ փարթամ աճող ծառերն ունենում են խիտ սաղարթ, վորի հետևանքով չիվերի գոյացումը թուլանում և պտղատու սաղարթի մեջտեղում և այդպիսի պտղաշիվերը դարձանում են աննորմալ, ունենում են մանր, անդույն և հիվանդ պտուզներ, վորը և ցածրացնում ե բերքի ապրանքային հատկությունը:

Այս իսկ պատճառով անհրաժեշտ ե ամեն տարի վերանայել ծառի սաղարթը և նոսրացման միջոցով տալ նրան լույս, արև և ոդ: Նոսրացման աշխատանքը հարկավոր ե կատարել վաղ դարձնանը, մենչեւ ծառերի արթնանալը, այսինքն հյութաշարժության սկիզբը:

Այս աշխատանքը հարկավոր ե կատարել աստիճանաբար և և շատ զգույշ վորպեսպի հնարավոր չափով չխանգարվի արժատային սիստեմի, վերերկրյա մասերի նորմալ դարձացման ու աճան ռեժիմը:

Բացի այդ, մեծ քանակությամբ վերք հասցնելով ծառին, մենք կարող ենք առաջ բերել հոռաշիվեր, վորն ի հարկե ցանկալի յերեւոյթ չե:

Սաղարթի նոսրացման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ե զեկավարվել հետևյալ պայմաններով:

ա) կտրել այն բոլոր ձյուղերը, վորոնք շվագված են ուժեղ ձյուղերով:

բ) հեռացնել այնպիսի ձյուղերը, վորոնք աճում են սաղարթի մեջտեղում և խանգարում են կատարվող աշխատանքներին.

գ) հեռացնել այն ձյուղերը, վորոնք ունեն խաչաձև դասավորում և շիման մեջ են իրար հետ, կամ թե աճում են զուգահեռ մեկ կետից, այս դեպքում պիտի հեռացնել թույլ աճող ձյուղը, թողնելով առողջը.

դ) հեռացնել այն հօռաշիվերը, վորոնց չի կարելի ոգտագրծել վորպես մայր՝ ձյուղ սաղարթի պակասը և բաց տեղերը՝ լրացնելու նպատակով:

Այս բոլոր աշխատանքներից հետո անհրաժեշտ ե բոլոր վերքերը ծածկել յուղաներկով, իսկ յեթե այդպիսին չկա, կարելի յե ծածկել կրի և կավի շաղախով, այլ կերպ, անձրևների, ինչպիս և արևի այրվածքների հետևանքով կարող են առաջանալ փտում և տարբեր տեսակի հիվանդություններ:

Վորպեսպի վերը հիվանդ աշխատանքներն ընթանան նորմալ և լինեն վորպեսպ բարձր, անհրաժեշտ ե լուրջ ուշադրություն դարձնել հետևյալ ինդիրների վրա:

1. Ձյուղը կտրելիս յերկար չորովկ չպետք ե թողնել, վորոնք հետև ծառը հարավորություն չի ունենա այդպիսի վերքը ծածկություն և ապահով համարակալ կարող է առաջանալ:

2. Կողմանակի ձյուղերը կտրելիս չպետք ե թողնել ողակի հավելվածքներ, վորոնք գտնվում են ձյուղի հիմքում, այս դեպքում վերքը չի ծածկվում և հետազյում առաջանում է վետավածք, վորը և տեղիք ե տալիս վիշտի:

3. Մեծ ձյուղը կտրելիս հարկավոր ե առաջին հերթին սղոցել ներքենի մասից և ապա վերևից, վորպեսպի ավելորդ և անտեղի վերքերը չհասցնենք ծառին:

4. Սղոցերուց հետո անհրաժեշտ ե ծառին հասցրած բոլոր վերքերը շտկել այդու սուր գանակով, վորպեսպի վերքը կարձամանակում առողջանա:

5. Հնարավոր յեղած սահմաններում քիչ և տրամագծով փոքր վերքեր պատճառել ծառին:

6. Բաց և բոլոր տեսակի վերքերը հարկավոր ե ծածկել յեղանյութով կամ կրի և կավի շաղախով:

7. Կարգած բոլոր ձյուղերը աշխատանքի վերջին անմիջապես հեռացնել այդուց:

### ՅԵ. ՆԱԶԱՐՅԱՆ

## ՊԱՇՏՈՆԵԼԻ ԲԵՐՔԸ ՎԱՍՏԱՏՈՒԵՐԻՑ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պտղատու այգիների վնասատուներն ու հիվանդությունները հաձախ խլուս են մեր բերքի զդալի տոկոսը. այդ պատճառով ել պտղաբուծական տնտեսության բերքատվության բարձրացման խնդիրներից մեկը պետք ե լինի՝ ապահովել մնասատուների և հիվանդությունների դեմ կիրառվող պայքարի միջոցառությունը:

Այս միջոցառումներն իրենց կարդարացնեն և արզունավետ կինեն միայն այն գեպքում, յերբ պայքարը կտարվի ժամանակին և սխամատիկ կերպով ու կը կրի համատարած մասսայական բնույթ։ Հակառակ գեպքում այդ միջոցառումները կը կորցնեն իրենց արժեքը, քանի վոր մի այգում վոչնչացրած ֆասադունիքը մերձակա այգուց կարող են տեղափոխվել և նորից վարակել այգին։

Հայաստանում պատառու այդիների աշքի ընկնող ֆասադուները և հիվանդությունները հետեւյալներն են՝

### Հիվանդությունները

1. Կորիզագոր պառուղների ծակոտկեն բծավորություն
2. Դեղձենու գանգրուտություն
3. Դեղձենու ալրացող
4. Սալորենու տերենների կարմրախոց
5. Պտուղների փտումը
6. Մոխրագույն փտումը
7. Խնձորենու և տանձենու քորը
8. Խնձորենու և տանձենու ժանդը

### Վնասատուներ

1. Լվիճներ
2. Խնձորենու ծաղկակեր
3. Բրդու բզեզ
4. Վոսկեղոծ ոինխիտ
5. Տանձենու զլխափողիկ
6. Խնձորենու ցեց
7. Խնձորենու պտղակեր

Այս հիվանդություններն ու ֆասադուները ամեն տարի հակայական ֆաս են հացնում, ժամանակին ու ճիշտ կերպով կազմակերպված պայքարը նրանց դեմ կապահովի բերքի թեքանակը և թե վորակը։ Պտղատու այդիների ֆասադուները և հիվանդությունները մասսայականորեն զարգանում և տարածվում են գարնան և ամառվա ընթացքում։ Զմունը և վաղ գարնանը նրանց սաղմերը դեռ քնած, թմրած գրության մեջ են լինում։ Ցեղ հենց այդ ժամանակ ե, վոր պետք և վոչնչացնենք հիշյալ սաղմերը։ Այդպիսով վոչնչացրած կինենք այն ոջախները, վորոնք պատճառ են դառնում նրանց հետագա մասսայական տարածմանը։ Այդ պատճառով ել պայքարը մասսադուների և հիվանդությունների գեմ պետք և սկսել վաղ գարնանը։ Վաղ գարնանից պատղատու այգում պետք և կատարվին մի կողմից այն աշխատանքները, վորոնք ուղղված են հիշյած ֆասադուների և հիվանդությունների ձմեռող ձեմքի դեմ և մյուս կողմից

պետք և տարվեն այն կուտառը-տնտեսական աշխատանքները, վորոնք ծառի անեցման համար լավ պայմաններ են ստեղծում, այսպես որինակ՝ հողը վարելը, ծառի կեղեմի մաքրելը, չորուկները կտրատելը, հողի պարարտացումը, ջրելը և այլն։ Այս աշխատանքները մի կողմից վոչնչացնում են այս կամ այն ֆասադույթն և մյուս կողմից բարելավում ծառի աճեցման պայմանները, և հետեւապես մեծացնում են նրանց գիմացկունությունը հիվանդությունների պեմ։

Առաջին աշխատանքը, վոր մենք պաղատու այգում պիտք և կատարենք վաղ գարնանը, դա չորուկները և հիվանդ ճյուղերը կտրելն ե, վորից հետո անմիջապես, առաջացած վերքերին պետք և քսել ճեթից և կավճից կամ ոխոայից պատրաստված մածիկ։

Միաժամանակ պետք և հավաքել ծառի վրա մնացած չորացած պատուղները, կտրած չորուկները, հիվանդ ճյուղերը և կետնին թափած պատուղներն ու տերենները և վառել։

Այնունետեւ պետք և անցնել ծառերի ըները մաքրելու և կիր քսելու աշխատանքներին։ Նախ քան այդ աշխատանքն սկսելը, ծառի տակ, ընի շուրջը փոռում են շոր և բռնն ու հաստ ճյուղերը մետաղյա խողանակով զգուշ մաքրում են մեռած կեղեմից։ Այդ մեռած կեղեմի տակ ե, վոր ձմեռում և պտղակերի թրթուռը, ծաղկակերի բզեզը, ինչպես և ուրիշ ֆասադուներ։

Հեռացնելով այդպիսի մեռած կեղեմի կտորները, մենք գրանով վոչնչացնում ենք ֆասադուներին, կամ նրանց թափում ենք շորի վրա և հետո հավաքում ու վառում։

Բները և հաստ ճյուղերը մաքրելուց հետո պատրաստում ենք կրի և կավի խառնուրդ ու հաստ վրձինով քսում ենք բնին ու հաստ ճյուղերին, լցնելով բոլոր ճեղքվածքներն այդ խառնուրդով։ Կիրը և կավը պետք և վերցնել հետևյալ հարաբերությամբ։ 12 լիտր ջրին (մեկ գույշ) 2 կիլո չհանգըրած կիր, 2 կիլո կավ և զրան ավելացնում են 600 գրամ յերկաթի արջասպ։ Վերջինս սպանում է սնկերի ձմեռող սպորները։

Ծառերի կիր քսելը (սպիտակեցնելը) ունի նաև այն նշանակությունը, վոր վրա շնորհիվ ծառերն այնքան չեն ֆասադում արենի աղղեցությունից։

Կրով սպիտակացումն անհրաժեշտ և առանձնապես յերիտասարդ ծառերի համար։

Հետևյալ աշխատանքը, վորը պետք և կատարվի վաղ գարնանը մինչև բողբոջների բացվելը (յեթե ուշ աշխան այդ չե կատարված), դա ծառի սրսկումն ե 5 տոկոսանի յերկաթի արջասպ։ Դրա համար 600 գրամ յերկաթի արջասպը լուծում ենք 12 լիտր

Ջրի մեջ և այդ լուծույթով սրսկում բոլոր ծառերը: Այդ սրսկումն ուղղված են սնկային հիվանդությունների ձմեռող սպորների և լինձների ձմեռող ձների գիմ:

Հետեւյալ սրսկումը կատարվում է 0,75% անոց բորդոյան հեղուկով, զորի մեջ ածում են նաև փարիզյան կանաչ: Այս սրսկումը կատարվում է պտղատու ծառերը ծաղկելուց անմիջաւ պես հետո և ուղղված է այն հիվանդությունների ու վնասատուների դեմ, զորոնք սկսում են մնամել այդ ժամանակ, ինչպես խնձորենու ցեցն և կամ նոր դուրս յեկող, մատադ տերեները վնասող ծակոտկեն բծավորությունը և այլն:

Դարնանը տերեները դեռ շատ նուրբ են, այդ պատճառով փարիզյան կանաչը և պղնձի արջասպը քիչ են վերցնում. այսպես՝ 12 լիտր (1 դուր) ջրին 8 գրամ փարիզյան կանաչ, 90 գրամ պղնձի արջասպ և 90 գրամ չեանգցրած կիր:

Դեղճնիները սրսկելիս փարիզյան կանաչ չպետք է խառնել բորդոյան հեղուկին, վորովհետև նրանց տերեները շատ նուրբ են և կարող են փարիզյան կանաչից այլպատճեներ ստանալ:

Բորդոյան հեղուկը պատրաստելու համար պղնձի արջասպը պիտի լուծել ջրի մեջ, փայտե ամանի, տակառի մեջ (յերկաթի ամանի մեջ չի կարելի լուծել), մյուս կողմից համապատասխան քանակությամբ չեանգցրած կիրը հանգցնում են քիչ քանակությամբ ջրի մեջ և յերբ նա վերածվում է փոշու, ավելացնում են ջուր, այսպես կոչված կրակաթ ստանալու համար: Այդ կրակաթը, քիչ քիչ լցնում են պղնձի արջասպի լուծույթի վրա փայտե ձուղիկով խառնելով, մինչև զոր կստացվի միատեսակ յերկնադույն հեղուկ:

Ճիշտ պատրաստած բորդոյան հեղուկի մեջ լակմուսի կապույտ թուղթը չպիտի կարմրի և վոչ ել կարմիրը կապտի, այլ պիտի ստացվի կապտավուն գոյն: Յեթե լակմուսի թուղթ չկա, կարելի յե բորդոյան հեղուկին ստուգել դանակի կամ մեխի միշտով: յերկաթը բորդոյան հեղուկի մեջ իջեցնելուց չպիտի կարմրի:

Սրսկելուց առաջ պետք ե բորդոյան հեղուկին ավելացնել փարիզյան կանաչ: Դրա համար նախորոք քիչ քանակությամբ ջրի մեջ շաղախում են փարիզյան կանաչը և ապա այն բաց առում բորդոյան հեղուկի մեջ:

Սրանք են վաղ գարնան վնասատուների և հիվանդությունների գիմ գործադրվող քիմիական պայքարի միջոցները: Բացի դրանից, անհրաժեշտ և խոշոր դեր ունեն բերքի պաշտպանման գործում վերեւում հիշված ազրուենարկումները և նրանց լրիվ կիրառումը:

Մ. ԱՎԱԳՅԱՆ

## ՍԻՄԵՐԵՆԿՈՎՇԽԻՆԱՅԻ ԱՐՏԱՎԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ

16-րդ համագումարից մինչև 17-րդ համագումարն ընկած 3 տարիների ընթացքում մենք վիթխարի նվաճումներ ունեցանք սոցշինարարության ասպարիզում: Այդ տարիներին ձեռք բերած մեր հաջողությունների հետևանքով մեր յերկիրը վերջնականապես փոխեց իր դեմքը՝ ազրարային յերկրից դառնալով ինդուստրիալ-ազրարային առաջավոր յերկիր:

Հիմնվին վերափոխվել և վերակառուցվել ե մեր գյուղը: Կոմկուսակցության ղեկավարությամբ կազմակերպվել են մաքենայացման յենթարկված հազարա վոր խորհանակություններ, իսկ նախկին ցիր ու ցան մանր անտեսություններին փոխարինել են կոլտնտեսություններներն իրենց մեքենայական հզոր բազայով: Կապիտալիստական տարրը՝ վորպես անտեսական ուժ, գյուղում վերացված են Սակայն դասակարգային թշնամին դեռ ևս գյուղություն ունի և նաթափում ե իր վերջեն ջանքերը՝ մեր սոց-վերակառուցման աշխախատանքները խանգարելու:

Դասակարգային թշնամու վնասարար աշխատանքը սեղի յեռնեցել վոչ միայն արդյունաբերության, այլև գյուղանական ունեցման մեջ: Վերջներս այդպիսի հականեղափոխական աշխատանք հայտնաբերվել ե նաև պտղաբուծության ասպարիզում մի շարք մասնագետների կողմից, վորոնք զեկավարել են պտղաբուծության պլանավորման և գիտական աշխատանքները հիյեփի պտղահատաին համամիտութենական հնատիտուտում:

Այդ վնասարարները հանձննու Սիմիրենկայի, լանգեյի, ժումիկոյի և ուրիշների՝ գիտավորյալ կերպով ուղեցել են պտղաբուծության զարգացումն ուղղել կուլտակային տնտեսությունների ուղիղով:

Նրանք գիտավորյալ կերպով անուշադրության են մատնել մի շարք այնպիսի պտղատու տեսակներ, ինչպիսիք են հատապտուղները՝ մորի, յելակ և այլն, կորիզավորներից՝ բալը, կենասը, սալորը, գեղձը և տանձի ու խնձորի գաճած կուլտուրաները, վորոնք ապահովում են վաղ պտղաբերությունը 3—4 տարում:

Մի շարք խողոր տնտեսություններում այդ վնասարարների ղեկավարությամբ կազմակերպվել են նոր տնտեսություններ, վորոնցում տնկված ե բալենու միայն մեկ սորտը՝ «գրոգանա-դեղին», վորն առում ե, բայց առանց ուրիշ սորտով փոշոտվելու պտուղ չի տալիս:

Նույնպիսի փաստ տեղի յեռնեցել նաև խնձորենու սորտերի նկատմամբ, վորոնք մտցված են արդյունաբերական ստան-

դարս առսորտիմենտի մեջ, իսկ նրանց փոշոտող սորտերը նույն ստանդարտի մեջ չեն մտցված, այնինչ հայտնի յե, վոր խնձորենին նույնպես տուանց ուրիշ սորտի փոշոտիչի պտուղ չի տալիս:

Իրենց աշխատանքների ընթացքում վնասարարներն ուժեղ դիմագրություն են ցույց տվել հայտնի պտղաբույժ Միջուրինի ցրտադիմացկուն սորտերի տարածմանը, և անուշազրության են մատնել նաև Նրա հեղափոխական մեթոդները: Մի շարք բարձրորակ պտղատու սորտեր, ինչպիսին ե «Փունտ ու կիսանոց անտոնովկան», վորը շատ ցրտադիմացկուն և և ստացվել են Միջուրինի աշխատանքների շնորհիվ, դիտավորյալ կերպով հյուսիսային շրջաններում չեն տարածել, վորով հարցած են հասցրել պտղաբությունը հյուսիսում զարգացնելու գործին:

Պտղաբուծության ասպարիզում կատարվող այդ վնասարարությունն իր արտահայտությունն ե գտել նաև գիտական ֆրոնտում, մանավանդ նրանով, վոր պտղատու սորտերի ուսումնասիրությունը սահմանափակել ե միայն այդ սորտերի մորֆոլոգիայով և թերագնահատել են այդ սորտերի տնտեսական հատկանիշները՝ բերագայությունը, ցրտադիմացկունությունը և բիոլոգիական միջարք կարեսը հասկանիշների վորոշումը: Յեվ, քանի վոր այդ մասնականիշների վորոշել են կենտրոնական Պտղահատային ինստիտուտում, հետեւաբար այդ ազդեցությունն անդրադարձել ե նաև Միջության մյուս վայրերում, նրանց զեկափարության տակ աշխատող զոնալ կայաններում և պտղաբուծական տնտեսություններում:

Անհրաժեշտ ե նշել, վոր Հայաստանում ևս նոր կազմակերպված տնտեսություններում թույլ են տրված մի շարք կոպիտ սըրված ված խալներ, վորոնք խիստ կերպով անդրադարձել են արտադրության վորակի վրա:

Կոնսերվուրեստի և Սովորութեստի մի շարք խոշնանտեսություններում (Կոնսերվուրեստի քաղաքամերձ և Սարկարաբատի խորտնտեսություններում) տնկված են ծիրանի «Շալալա» սորտի միասորտ տարածություններ այն ժամանակ, յերբ միանդամյան պարզ ե, վոր այդ սորտն առանց փոշոտիչ սորտի պտուղ չի տա: Վարդանլի խորհանտեսությունում 29—30 թվին պտուղ չի տա: Վարդանլի խորհանտեսությունում անտնկված են մեծ քանակությամբ ծառեր վոչ ստանդարտ և անտնկված են մեծ քանակությամբ ծառեր վոչ ստանդարտ և անտնկված են սորտերից, վորոնց բերքատվության հնարավորությունները նմանապես անհայտ են: Մի շարք նոր կառուցվող խորհանտեսություններում այդի տնկելիս չեն պլանավորել սորտերի դասավորումը, վորով պատահականության են մատնել տնկած ծառերի ապակա բերքատվությունը:

Անհրաժեշտ ե վերջապես գիտակցել վոր պտղաբուծական տնտեսությունների կազմակերպման ժամանակ թույլ տված սխալ ները խիստ կերպով անդրադառնության են այդ տնտեսությունների հումքի արտադրության և բան մտակառարման համար:

Համապատասխան տրեստները պետք ե անմիջապես մի շարք գործնական ձեռնարկություններով ուղղեն թույլ տված սխալները, ապահովեն նոր կառուցվող տնտեսությունների ուղիղ կազմակերպումը, վորի համար անհրաժեշտ ե զեկավարվել մեր զոնալ կայանի կողմից հրատարակված հրահանգներով և հրատարակություններում յեղած համապատասխան զրականությամբ կարելի յե նաև անմիջապես դիմել կայանի խորհրդատու բյուրոյին՝ խորհուրդներ ստանալու համար:

## Հ. ԶԱԽԿԱԼՅԱՆ

### ՊԱՅՔԱՐ ԲԱՆՁԱՐԵԼԵՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յերկրորդ հնգամյակի բայլունիկյան յերկրորդ գարնանացանի հաջող կազմակերպումը, կուսակցության և իշխանության կողմից տրված պլանային առաջադրանքների քանակական և վորակական լրիվ կատարումը և գերակատարումը, պահանջում են ամենից առաջ ճիշտ կազմակերպել արտադրությունը կոլտնտեսություններում և խորհանտեսություններում:

Սոցիալիստական բանջարաբուծության առաջ գրված հիմնական խնդիրները յերկրորդ հնգամյակում հետեւալներն են՝ բերքատվության բարձրացում, վորակի լավացում վիտամիններով առատ՝ ծալաթային բանջարեղենների մշակության տարածումը լեռնային և նախարարեցենների մշակության տարածումը և բանջարեղենների արտադրության կազմակերպումը տարվա բոլոր ամիսներին:

Բերքատվության բարձրացումը պահանջում է ազգութեան կումարականի մի ամբողջ կումարկության և ճշգրիտ կիրառում, վորի կենսազործումը պետք ի սկսել գարնանացանի նախապատրաստական հենց առաջին որերից:

Այդ ագրութեանարկումների հիմնական ողակներն են՝ աշխատանքի նպատակահարմար կազմակերպումը, արտադրական ուժերի ճիշտ գասավորումը, արտադրության մեքենայացված տեխնիկան:

յին տիրապետելը, ազրուանխնիկական միջոցառումների ժամանակին և լրիվ կիրառումը, ցանքաշրջանառությունը, տեսակավոր սերմերով և լավորակ սածիլով ցանք կատարելը, հողի պարարտացումը, մոլախոտերի, փասատուների, հիվանդություների և կորուստների գեմ պայքարելը:

Աշխատանքի նպատակահարմար կազմակերպումը, ուժերի ճիշտ դասավորումը՝ սերտ կապված լինելով կանոնավոր ցանքաշրջանառության կիրառման հետ, գալիս են ասելու, վոր ցանքաշրջանառությունը, վորպես բերքատվության բարձրացման լավագույն միջոցներից մեկը, մեր ուշադրության կենտրոնում պետք է լինի և անցկացվի ըոլոր տնտեսություններում:

Սրանից ել պետք ե սկսել գարնանացանի նախապատրաստական աշխատանքները:

Ճիշտ կազմած ցանքաշրջանառություն՝ ապահովելով առաջատար կուլտուրայի, տեսակարար բարձր կշիռ և պետության պլանային առաջարանքը՝ ազրոկոմպլիքսի լրիվ կիրառման դեպքում, նպատակում և հողի բերրիության պահպանմանը, անտեսության դաշտերի բարձր բերքատվությանը, ապահովում ե մոլախոտերի, փասատուների և հիվանդությունների գեմ տարվող պայքարի հաջողությունը և միաժամանակ, արտադրական ուժերի ուղիղությունը ուղարկուման և ամբողջ տարվա ընթացքում միահամապար բերնվածության հնարավորություն և ստեղծում:

Այսպիսով ուրեմն, ցանքաշրջանառության անցնելը գարնանացանի առաջնակարգ խնդիրներից մեկն ե, վորի իրագործումը մեր կոլտնտեսային կայուն հողոգտագործման պայմաններում, պետության կոնկրետ առաջազրանքի հետ միասին միանգամայն ապահովված պիտի համարել:

Բանջարուծական անտեսություններում կարող ե լինել կամ զուտ բանջարանոցային ցանքաշրջանառություն, կամ խառն, հացաբույսերի և կերպարույսերի հետ. այս խնդիրը վորոշելու համար ամենից առաջ պետք ե յեխել անտեսության ուղղությունից՝ խոր անալիզի յենթարկելով անտեսության հետագա զարգացման հեռանկարները. Մշակած ցանքաշրջանառությունը հաստատվում է շրջնորգաններում և այնուհետև կիրառվում կյանքում. Այս առթիվ անհրաժեշտ ե զեկավարվել Հողժողկոմատի ցանքաշրջանառության բուրոյի կողմից հրատարակված ցուցմունքներով:

Ցանքաշրջանառությունն ընդունելուց և անտեսության արտադրական-ֆինանսական պլանները կազմելուց հետո, գարնանացանի հաջող անցկացման համար անհրաժեշտ միջոցառումները:

1. Ժամանակին ավարտել գյուղմեքենաների և գործիքների վերանորոգումը և ստուգել նրանց պատրաստականությունը գարնանացանի համար:

2. Կարգի բերել քաշող ուժի սարքավորումը և ապահովել անասունների կերի պաշարը գարնանացանի ժամանակամիջոցի համար:

3. Պարզել պահանջվող սերմերի քանակը, ապահովել նրանց ժամանակին ձեռք բերելը, վաղորոք ստուգել նրանց վորակը՝ ձըլունակությունը, մաքրությունը և կատարել սերմերի ախտահանումն ու զառումը:

Ցանքելք սերմերի վորակի վրա պետք ե շատ մեծ ուշադրություն դարձնել, վորովհետև, կեղտոտ, հիվանդոտ սերմերից՝ նույնիսկ ագրոտեխնիկական միջոցառությունը լրիվ կատարման դեպքում, հնարավոր չե դրական արդյունք ստանալ:

Այսուհետև մեծ նշանակություն ունի ցանքելիք կուլտուրայի սորտը (փոփոխակը), վորովհետև բանջարաբուծության մեջ, ինչպես և գյուղատնտեսության բոլոր ճյուղերում, փոփոխակը խոշոր գեր ե խաղում բերքատվության բարձրացման և պրոդուկցիայի վորակի լավացման գործում:

Այս տեսակետից անհրաժեշտ և ամեն մի անտեսությունում բանջարանոցային կուլտուրաների սորտերն ընտրելիս ի նկատի ունենալ անտեսության տված պատվերը, արտադրվող մթերքի գործածության նպատակը, ըստ վորում բանջարեղենների սորտերի ստանդարտիզացիան, նամանավանդ կոնսերվի գործարանի հումուրյթի բազա հանդիսացող անտեսություններում, անհետաձգելի ագրոձեւնարկումներից մեկը պետք ե լինի:

4. Հետևյալ հիմնական խնդիրը բանջարաբուծության բերքատվության բարձրացման համար, դա պարարտացումն ե, վորի կանոնավոր կիրառումը դժբախտաբար մեր մի շարք անտեսություններում իր բարձրության վրա չի զբաժ և վորոշ գեղքերում նույնիսկ մոռացության ե տրվում: Հաճախ ե պատահում, վոր մեր մի շարք անտեսություններ ցանքը կատարում են առանց պարարտացման: Բանջարանոցի պարարտացման համար պետք ե ոգտագործել անտեսություններում յեղած բոլոր հնարավորությունները, յեխելով այն հանգամանքից, վոր բանջարանոցի համար վորպես պարարտանյութ կարելի յե ոգտագործել մի շարք որդանական նյութեր—գոմաղբ, տնային աղը, արտաքնօցները

կղկղանքը, քաղաքների փողոցներից ավլած աղբը և այլն: Բացի ամսնագրաւոր պարարտացման համար պետք է լայն չափով ոգտագործել հանքային պարարտանյութերը:

Ամենից առաջ պետք է կազմակերպել անտեսություններում յեղած գոմաղբի հավաքը և կանոնավոր պահելը մինչև դաշտ դուրս բերելը, լավ գիտենալով, վոր միայն կանոնավոր պահած գոմաղբն և, վոր տալիս և բարձր հենքամ, իսկ անկանոն պահած աղբից, վորի սննդանյութերի մեծ մասը լվացվել և հեռացել և, առանձին եֆեկտ սպասել չի կարելի: Այնուհետև ամբողջ աշնան, ձմռան և վաղ գարնան ընթացքում պետք է կազմակերպել գոմաղբի փոխաղբումը դեպի դաշտ: Մեկ հեկտարին սովորաբար տրվում է 40—60 տոնն կամ 100—120 սայլ գոմաղբ: Մեծ ուշագրություն պետք է գարձնել գոմաղբը կանոնավոր կերպով հողին տալու աշխատանքների վրա: Բացի գոմաղբից, ինչպես արդեն սասցինք, պետք և ոգտագործել անտեսություններում յեղած բոլոր որդանապահութերի թափթփուկները և աղբը, բանջարանոցների պարարտացման համար, վորոնց գործածության նորմաները և հողին տալու ձեերը նույնն են, ինչ վոր գոմաղբինը:

Առանձնակի նշանակություն ունի այս ձեի պարարտանյութերի գործաղբումը քաղաքամերձ անտեսություններում, վորոնք գտնվելով խոշոր քաղաքների շուրջը՝ լայն հնարժվորություններ ունեն ոգտագործելու այն հսկայական քանակի աղբը, վոր ամեն որ գուշրմ և բերվում քաղաքի տներից և բակերից: Այնուհետև մեծ չափով պետք է զարկ տալ հանքային պարարտանյութերի գործաղբմանը, վորոնք մեծ հեռանկար ունեն մեզ մոտ տարած վելու, և վորոնց արտադրությունը մեծ չափերով զարդանալու յերկրորդ հնգամյակում:

Այս խնդրում, պետք է ասել, վոր մենք առայժմ շատ հետ ենք մնացել այն իմաստով, վոր հանքային պարարտանյութերի գործաղբումը մեր կոլխոզային դաշտերում առայժմ քիչ և տարածված, մինչդեռ մեր գիտահետազոտական աշխատանքները ցույց են տալիս, վոր հանքային պարարտանյութերի, գլխավորապես առաջ առաջման առաջական հաստատելու, վոր մեր հողային կլիմայական պայմաններում հանքային պարարտանյութերի գործաղբումը բերքի բարձրացման կարևորագույն լծակներից մեկն է:

Հանքային պարարտանյութերի գործաղբման ժամանակի հարկեալ պետք է յելնել տվյալ անտեսության հողային կլիմայական պայմաններից և մշակվող բույսի հատկություններից, սակայն որյեն-

1. Աղոտի դոզաները (վերցված և ծծաբաթթվային ամոնիում)

սուպերֆոսֆատի փոնի վրա

	Բերքը մեկ հեկտարից	Բերքը տոններով
O Սոուգիչ (կոճարով)	8,9 տոնն	100
P Սուպերֆոսֆատ (Փոն)	9,2 >	103,4
N 60 կ. (աղոտ հեկտարին 60 կիլո)	9,8 >	110,2
N 90	11,8 >	132,6
N 120	14,7 >	165,2

2. Ֆոսֆորի դոզան (սուպերֆոսֆատագոտի ֆոնի վրա)

	Բերքը մեկ հեկտարից	Բերքը տոններով
O Կոնարով	12,2 տոնն	100
N Ծծմբաթթվամ ամոնիում Փոն	14,9 >	122,1
P 45 սուպերֆոսֆատ հեկտարին 45 կիլո	13,0 >	106,2
P 60	14,6 >	120,0
P 75	13,1 >	107,3

Սննդանյութերի պահանջը հողում վորոշելու համար 1932 թ. պամիդորի հետ արված փորձը տվել է հետեւյալ արդյունքները:

	Բերքը մեկ հեկտարից	Բերքը տոններով
O Առանց պարարտացման	122,7 տոնն	100
NK (աղոտ և էալիում)	111,4 >	90,8
PK (ֆոսֆոր և կալիում)	138,5 >	112,9
NP (աղոտ և ֆոսֆոր)	170,9 >	139,3
NPK (աղոտ, ֆոսֆոր և կալիում)	172,3 >	140,4

Բերած թվերը բավական են հաստատելու, վոր մեր հողային կլիմայական պայմաններում հանքային պարարտանյութերի գործաղբումը բերքի բարձրացման կարևորագույն լծակներից մեկն է:

Հանքային պարարտանյութերի գործաղբման ժամանակի հարկեալ պետք է յելնել տվյալ անտեսության հողային կլիմայական պայմաններից և մշակվող բույսի հատկություններից, սակայն որյեն-

տիր կերպով կարելի յե ասել, վոր տերեւաբանջարների համար (կաղամք, կանաչեղեններ, սպանալ և այլն) հեկտարին պետք է վերցնել 350—400 կիլոգրամ ազոտ պարունակող պարաբանյութ՝ և 250—300 կիլոգրամ ֆոսֆոր պարունակող պարաբանյութ, իսկ պաղաբանջարների՝ (տոմատ, բաղրջան, տաքտեղ, վարունդ և այլն) համար հարաբերությունը կլինի հակառակր, այսինքն ազոտ պարունակող պարաբանյութ հեկտարին 250—300 կիլոգրամ, ֆոր պարունակող պարաբանյութ 350—400 կիլոգրամ:

Հանքային պարաբանյութերը արվում են հողին կամ աշխանից կամ գարնանը ցանքից ու սածիլումից 7—10 որ առաջ փոցինելու ժամանակ:

5. Հետեւալ կարեսրագույն խնդիրն առողջ և տեսակավոր սածիլ պատրաստելն է, վորի համար պետք և ոգտագործել բոլոր յեղած հնարավորությունները—ջերմոցները, տաք մարգերը և բաց սածիլանոցները: Սածիլավոր կուլտուրաների հաջող մշակությունը մեծ չափով կախված է սածիլի վորակից, վորի մասին սույն գրքույկում մանրամասն գրել ե Թ. Ավագյանը:

6. Ազրոտեխնիկական ձեռնարկումներից առաջին տեղը պետք է ըստ հողի կանոնավոր մշակությանը—հերկին, կրկնահերկին և վեգետացիայի ընթացքում կատարվող մակերսային մշակությանը, փերեցմանը և բուկ տալուն: Բանջարանոցային բոլոր կուլտուրաները պահանջում են խոր հերկ (20—25 ս. խորությամբ), վորը ցանկալի յե կատարել աշխանից, հողի քեզ վիճակում, վորովհետև աշխանավարն ունի մի շարք խոշոր առավելություններ, իսկ քեզ հողը լավ է հերկվում, կոշտեր չե տալիս և նպաստում է հողի փերեցմական դրության լավացմանը:

Յեթե տնտեսությունն աշխան հերկը կատարելու հնարավորություն չի ունեցել, այդ դեպքում խոր հերկը պետք է կատարել վաղ գարնանը: Աշխանից հերկված հողը վաղ գարնանը պետք է փոցինել, վորակսիդի խոնավությունը պահպանի, այնուհետև պետք է կատարել կրկնահերկ: Հողի մշակության հետ դուգընթաց պետք է պայքար սկսել մոլախոտերի գեմ, հավաքել չայիրների և զանդուրդանի տակուիները, վորոնք մեր բանջարանոցների ամենած թշնամիներն են, հետագայում սովորական քաղնանի ու կուլտիվացիայի ընթացքում դժվար է վոչնչացվում: Զայիրի և զանդուրդանի հավաքելը հերկի և փոցինի ժամանակ մեծ չափով թեթևացնում է հետագա քաղհանի աշխատանքները և բանումը տնտեսվում է 2—3 անգամ: Հավաքած չայիրը և զանդուրդանն անմիջապես պետք է հեռացվի դաշտից, վորակսիդի քամին նորից չըրի: Զայիրի հետ միասին անհրաժեշտ է հավաքել նաև բանջա-

րանոցից քարերը, վորոնք մեծ խոչնդում են հանդիսանում հետադա մշակության ժամանակ և դժվարացնում են մեքենայացման աշխատանքները:

7. Այս հիմնական աշխատանքների հետ միասին պետք է ամեն մի տնտեսությունում կազմել ցանքի և սածիլման ճշգրիտ ժամկետները և գարնանացանն անցկացնել ճիշտ նշված ժամանակամիջոցում, վորովհետև բերքատվության բարձրացման ակտակետից խոշոր նշանակություն ունի ցանքի ժամանակին կատարումը: Մեր գիտահետազոտական աշխատանքները ցույց են տվել, վոր 10—15 որվակ ուշացումը գարնան ցանքի ժամկետներում խոշոր ազդեցություն է թողնում բերքատվության վրա, իջնելով բերքի քանակը 15—20%:

Այս տեսակետից հետաքրքրական են պաղաբանջարառական Զոնալ կայանի 1933 թվի փորձերը:

#### Վարունգի գարնան ժամկետային փորձ

Ցանքի ժամկետ	Բերքը մեկ հետարից
3 մայիսի . . . . .	29,4 տոնն
10 մայիսի . . . . .	31,4 »
20 մայիսի . . . . .	28,5 »
30 մայիսի . . . . .	28,4 »
10 հունիսի . . . . .	27,0 »
20 հունիսի . . . . .	12,3 »
30 հունիսի . . . . .	10,4 »
10 հուլիսի . . . . .	6,5 »

#### Տոմատի ժամկետային ցանքը Կոտայքում

13 հունիսի . . . . .	15,4 տոնն
22 հունիսի . . . . .	11,4 »
2 հուլիսի . . . . .	8,2 »
22 հուլիսի . . . . .	4,2 »

Այսպիսով պարզ է վաղ ցանքի առավելությունները և այս տեսակետից յելնելով պետք է ասել, վոր ժամկետների խստիվ պահպանումը և գարնանացանի ժամանակին ավարտումը հետագա աշխատանքների և բարձր բերք ստանալու կարևոր նախապայմաններից մեկն է:

8. Այնուհետև սոցիալիստական բանջարաբուծության հիմնական խնդիրներից մեկն և նորագույն մեքենայացված ագրոտեխնիկային ախրապետելու ու կյանքում կիրառելը:

Այս ասպարիզում, ինչպես նաև դյուղատնտեսության մնացած բնագավառներում, խոշոր աշխատանք ունեն կատարելու մեր ՄՏԿ-ները, վորոնք հանդիսանում են սոցիալիստական դպրության կազմակերպող և գեկավարող որդանները: Բանջարաբուժության արտադրության բոլոր հիմնական աշխատանքները լիակատար կերպով հնարավոր են մեքենայացման յենթարկել և այդ բանի համար մենք ունենք մի շաբթ կատարելագործված մեքենաներ:

Այսպիսով, ուրեմն, ամեն մի կոլտնտեսությունում ու խորհունտեսությունում պետք են մշակվի կիրառվելիք ազգութեանիկական բոլոր ձեռնարկումների կատարման ժամկետները և ծրագիրը, հաշվի առնելով տեղական բոլոր հնարավորությունները և առանձնահատկությունները:

9. Վերջապես, պետք են լավ հիշել վոր բերքատվության բարձրացման խնդիրը պահանջում են ամենորյա, համառ պայքար մղել կորուստների դեմ սկսած ցանքի որից մինչև բերքահավաքի և ձմռան պահերու վերջը:

## ՄՐՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ՏԱՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԻՆ ԱՌՈՂՉ ՍԱՄԻԼ

Բանջարանոցային կուլտուրաների բերքատվության բարձրացման հիմնական պայմաններից մեկն առողջ սածիլն է:

Բանջարանոցում կիրառվող լրիվ ազգումագլեթու, այն են ցանքաշրջանառություն, աշնան ցել, որդանական և քիմիական պարարտացում, տեսակավոր սերմերով ցանք, պայքար հիվանդությունների և մասամբ դեմք ցանք, պայքար հիվանդ և այլն, այդ բոլորը լրիվ եթեկա չեն տա, յեթե մեր սածիլը յեղել և հիվանդ և վատ վորակի: Պարզ են, վոր հետագայում դաշտում ինչքան ել լավ խնամք տարփի, հիվանդ կամ թույլ սածիլից ստացված բույսը լուսվ բերք տալ չի կարող:

Սածիլը ջերմոցում պահանջում է հատուկ ուշագիր խնամք: Ջերմոցային խնամքը դա մի հատուկ գիտելիք են, վորով պետք են զինված լինեն մեր բանջարաբուժությամբ դբաղվող կոլխոզնիկները, յեթե նրանք ցանկանում են իրոք ստանալ առողջ և բարձր վորակի սածիլ:

Բույսն իր աճեցողության համար, բացի պարարտ հողից, պահանջում է հետեւյալ չորս պայմանները—ջերմություն, ջուր, լույս և որ:

Ջերմոցավարը կարող է այս չորս պայմաններն ել իր ցանկությամբ, յելնելով բույսի պահանջից, կանոնավորել ջերմոցում:

Ջերմություն.—Ջերմոցում տաքությունն առաջ են դալիս նախքայլով զոմազրից, և յերկրորդը՝ ապակիների միջոցով արեցից: Ջերմոցի ջերմաստիճանը պետք է համապատասխանի մշակվող բույսի պահանջին, ըստ վորում կաղամբի և այլ խաչածաղկավորների համար ամենալավ ջերմությունը համարվում է 15—18-ը, իսկ մնացած բույսերի՝ պամիզորի, տաքտեղի և բաղրջանի համար՝ 22—25<sup>0</sup>. սրա հետ միասին պետք է խուսափել ջերմության ուժեղ տատանումներից: Եատ ցածր ջերմության գեպքում ցանած սերմերը չեն ծլում և յերկար ժամանակ խուսավ հողում մնալով նեխուս են, մուռա կողմից ծլած բույսերն ել—ջերմությունը շատ իշնելիս, կարող են ցրտահարվել:

Սա կարող է պատահել այն դեպքում, յերբ ջերմոցային աշխատանքն ակնում են ցուրտ յեղանակներին, որինակ կունվարին: Այսպիսի ցուրտ որերին ջերմոցը պահանջում է հատուկ ուշագիր խնամք, այն և գիշերները լավ ծածկել, իսկ ցերեկը խսիրները վերցնել այնպիսի ժամանակի վոր ջերմոցը շատ չսառի, ողն ել տալ կարճ ժամանակով և որվա տաք ժամերին:

Այս խնդրում նշանակություն ունի վոչ միայն դրաի ողի ցածր ջերմությունը, այլ նաև գոմաղբի այրման աստիճանը: Ցուրտ ժամանակ լցվող ջերմոցում զոմաղբի շերտն ավելի հաստ պետք է լինի, վորպեսող ավելի ուժեղ այրվի և ապահովի անհրաժեշտ ջերմությունը: Ցեղանակները տաքանալու հետ միասին սառչելու վտանգն ավելի յե պակասում և լցվող ջերմոցներն ավելի սաղը են վերցնում, քանի վոր այդ ժամանակ արևն սկսում է ուժեղ տաքացնել ջերմոցը և ապօռությունն ստացվում է թե արեի ճառագայթներից և թե գոմաղբից:

Գարնան ամիսներին առաջ են գալիս յերկրորդ վտանգը, այն և նորմալից բարձր ջերմություն ջերմոցում: Սա կարող է պատահել հետեւյալ զեպքերում: Առաջինը՝ արև որերին, յերբ խսիրները վերցված են, իսկ ցըշանակները չեն հանված, այդ գեպքում արեի ուժեղ ճառագայթներն ապահով միջոցով՝ կարող են այրել բույսի տերեները: Այրված բույսերի տերեները կարծես խաված լինեն, գեղնասպիտակին են տալիս, վորով և հեղառությամբ տարբերվում են առողջ բույսերից: Եթե այրվածքն ուժեղ են, բույսը վոչնչանում են, իսկ յեթե թույլ են, այն ժամանակ նա կարող է աճել, սակայն շատ դանդաղ, հետ են ընկնում առողջներից և լինում են վակագ:

Այս վատանգի տռաջն տունելու համար պետք ե զգույշ լինել և զարնան արև որերին ջերմոցների շրջանակները վերցնել, և տմբողջ որը ջերմոցը բաց պահել, իսկ յեթե շրջանակները չեն վերցվելու, տպա խսիրներն ել պետք ե ծածկած թողնել, միայն չմոռանալ առատ ող տալ:

Խոնավ և տաք ջերմոցներում բույսերը ժամանակին ող չստանալու գեղքում նվազում են, բարակում և ձգվում, չկորցնելով իրենց կանաչ գույնը, փորով և տարբերվում են լույսի պակասության հետևանքով ձգված բույսերից: Այս յերեսույթները տեղի չունենալու համար անհրաժեշտ ե ջերմոցը կանոնավոր ոդափոխել, ող տալ յերկար ժամանակ, նայած յեղանակին, մի քանի տեղերում բարձրացնելով շրջանակները:

Խօնավուրյուն.—Խօնավուրյունը ջերմոցում շտա հեշտ և կանոնավորել, միայն պետք ե հիշել ջըելու հիմնական կանոնը, այն ե՝ ամեն անգամ ջըելիս ամեն մի շրջանակի տակ պիտի լցնեն այնքան ջուր, վոր հողի ամբողջ ջըետը խոնավանա, դրա համար ամեն մի շրջանակի տակ պետք ե տալ 2—5 դույլ ջուր, նայած տարվա լիդանակին և գոլորշիացման աստիճանին:

Պետք ե ջերմոցը ջրել ցնձուգով, միայն հավասար կերպով: Լավ ջրելու գեղքում ամեն որ ջրելու կարիք չի լինում, քանի վոր հողի ամբողջ ջըետը խոնավանալու գեղքում ջուրն ավելի յերկար ժամանակ ե բավարարում: Անթույլատրեի յե, յերեամեն մի շրջանակին տալիս են 1—2 դույլ ջուր, վորը խոնավացնում և հողի միայն վերել ջըետը, իսկ այն ջըետը վորտեղ դանովում են արմատները, մնում ե չոր, և շտա անգամ ստացվում ե հետևյալ պատկերը՝ ջերմոցի հողը կարծես թե խոնավ ե, իսկ բույսերը ջրի պահանջ են զգում: Ջրի պահանջը կախված ե որվա յեղանակից և ջրմոցի տարաւթյունից: Ինչքան ջերմոցը տաք ե որն ել արևոտ, այնքան ջրի գոլորշիացումն ար ոգ ե կատարվում և բույսի պահանջը գեղի ջուրը բարձրանում ե: Պարզ ե, վոր այդպիսի գեղքերում ջերմոցը պետք ե ամենի շուտ-շուտ ջրել:

Գերխոնավուրյունը, ինչպես և չորությունն ունեն իրենց բացասական կողմերը: Այսպիս, վեր-խոնավության գեղքում սածիլ յենթակա յե զանազան սնկային հիվանդությունների, որին արմատի սե ախտ, վորից արմատավզիկը փտում ե և բույսերը զոչնչանում են: Զորության գեղքումն ել բույսերը ջրի պակասության հետևանքով լրիվ զարգանալ չեն կարողանում, գեղնում և զոչնչանում են:

Լույս.—Բույսի զարգացման հիմնական պայմաններից մեկը լույսն ե: Լույսի պակասության գեղքում բույսերը կոր-

շնում են իրենց կանոչ գույնը և թույլ հիվանդութեան պատճեմ: Յերբ ջերմոցում ծիլերն սկսում են առաջ գալ, պետք ե ուշադիր լինել և ժամանակին խսիրները հանել, հակառակ դեպքում բոլոր բույսերը կձգվեն այն կողմը, վորտեղից լույս և ընկել, կերպարեն և ցողունն ու տերեները կկորցնեն իրենց մուգ կանաչ գույնը: Այսպիսի ձգված սածիլը, ի հարկե, թույլ և լինում է հետագայումն ել լավ չի զարգանում: Ուրեմն, պետք հիշել մի բան, յերբ սերմերը ծլել են, ցերեկներն այլևս խսիրներ ծածկել չեն կարելի, բույսին պետք ե առատ լույս տալ:

Յեթե սածիլները նոր են սկսել ձգվել, հնարավոր և վորոշ չափով ուղղել այդ սխալը, վորի համար բույսերին պետք ե տալ առատ լույս, ող և քիչ ջրել:

Ո գ.—Թարմ ողի ներկայությունը խիստ անհրաժեշտ ե բույսերի նորմալ զարգացման համար: Դիշելու ընթացքում ջերմոցում ստեղծվում ե գերխոնավություն, բարձր ջերմաստիճանն և զուազբի քայլայման հետևանքով անցանկալի գաղեր:

Այդ պատճառով ցանքի հենց առաջին որից սկսած պետք ե ջերմոցում կատարել ողափոխություն: Դրա համար սկզբում շըրջանակները պետք ե բարձրացնել միայն կարճ ժամանակիցուցիչ գործում, իսկ հետագայում՝ հնարավորության չափ շուտ-շուտ և յերկար ժամանակով:

Բացի վերը հիշվածից, ջերմոցում պահանջվում ե նաև այլ խօնամք: յերբ բույսերն առնեն առաջին կամ յերկորդ խսկական տերեւը, պետք ե կատարել վերատնկում կամ պիկիրովկա: Այդ անելու համար ջերմոցը լույլ ջրում են, վորպեսի բույսերի արմատները չկարտվեն, ապա ձեռքով բույսերն զգույշ քաշում են և նոր պատրաստած ջերմոցում սածիլուց առաջ կտրում են գլխավոր արմատի 1/3 մասը: Բույսերը տնկում են իրարից 5—6 սանտիմետր հեռավորություն վրա, իսկ պամիզարը պետք ե տնկել ավելի հեռու, քանի վոր նա ճյուղավորվում ե: Պիկիրովկայի նպատակն ե բույսերին առա սնման մեջ տարածություն, վորպեսի նրանք լավ զարգանան, ամուր լինեն և չձգվեն: Արմատը հատելու և ցողունը հողով ծածկելու գեղքում ուժեղ կերպով առաջ են զալիս յերկորդական արմատներ, վորոնք և ուժեղացնում են բույսը:

Մինչև պիկիրովկա արած բույսերը կպչեն, պետք ե ջերմոցի հողը խոնավ պահել և շրջանակներն ել ծածկել խսիրներով, վորովինեած առաջավագ միջավայրում սածիլին ավելի լավ և արագ կկպչի:

Վերատնկման յենթարկված սածիլները բռնելուց մի քանի որ հետո պետք ե կատարել հողի փիլրեցումը կամ ինչպես առում

«իմրիբում», վորը նպաստում ե հողի ոդաթափանցկության։ Այս աշխատանքը 2—3 անգամ կրկնելու գեղքում սածին արագ աճում և ամրանում է։ Բացի փիրեցումից՝ յեթե մոլախոտեր կան ջերմոցում, պետք ե քաղհան անել։

Սյս ձեռվ կատարած պիկի բովկան թեև տալիս ե խոշոր արդյունք, սակայն ամբողջ աշխատանքը ձեռքով կատարելը մեր հերկա պայմաններում սոցիալիստական խոշոր անտեսություններում, այլևս հանդուրժել չի կարելի, և արդեն աշխատանքներ են տարիում պիկի բովկայի աշխատանքները մեքենայացման յենթարկելու համար, կամ սածի մեծացնելն այնպես տանել, վոր բույսերն առանց տեղափոխման նրանց գարզացման համար ստեղծվեն նորմալ պայմաններ։

Մրա համար ցանքը կատարում են շարքացան 5—6 սմ. միջարքային արածությունով, այնուեւեա բույսերը ծելուց հետո կատարում են նոսրացում, թողնելով բույսը բույսից 4—5 սմ. հեռավորության վրա։ Վորպիսզի բույսերը լավ արմատակալեն, նրանց ցողունը պետք ե ծածկել հողով։ Դրա համար բույսերի առաջին կամ յերկրորդ իսկական տերևն առաջ դալուց հետո պետք ե ցողուններին բուզլիցի ձեռվ հող տալ կամ թե չե պատրաստած հողը վերկից մաղել, միայն թե այնպես պետք ե անել, վոր ամբողջ բույսը չթաղվի հողի մեջ։

Բացի այս բոլորից, առողջ սածի ստանալու համար անհրաժեշտ և առողջ սերմ և չփարակված հող՝ Բանջարեղենի սնկային հիվանդությունները տարածվում են զլիսավորապես սերմերի միջոցով, ուստի անհրաժեշտ ե նրանց զեմ պայքարն սկսել հենց սերմը ցանելու որից։ Պայքարի հիմնական միջոցը սերմերի ախտահանումն ե ցանքսից առաջ։ Որինակ՝ պամիզորի սերմը արմատավղիկի սև ախտ հիվանդության զեմ և բակտերիոզի զեմ դիմացկուն դարձնելու համար մի քանի որ առաջ պետք ե ախտահանել սուլեմայի լուծույթով և զրա համար վերցում են մեկ մաս սուլեմային 4000 մաս ջուր։

Սերմերը լցնում ենք թանդիքից պատրաստած տոպրակը, վորն իշեցնում ենք պատրաստած լուծույթի մեջ, լավ թթվում, յերեք րոպե պահում լուծույթի մեջ, ապա հանում և մաքուր սառը ջրով լավ լվանում։ Դրանից հետո սերմերը պետք ե ցամաքեցնել, վորպիսզի ցանելիս մատներին չկազի։

Բացի սերմից, հիվանդությունը կարող ե անցնել նաև հողի միջոցով, այդ պատճառով չի թույլատրվում ջերմոցի համար հողը վերցնել այնտեղից, ուր նախորդ տարիները բուսել են հիվանդ բույսեր։ Նույնը վերաբերում ե նաև սածիլանոցին։

Յեթե ջերմոցում նկատվում են հիվանդ բույսեր, պետք ե այդ բույսերը հանել, հեռացնել, ջերմոցում ստեղծել ոդի և ջրի նորմալ սեժիմ։

Անա այս բոլոր պայմանները կիրառելու գեղքում հնարավոր ե ստանալ առողջ և ամուր սածի։

Սակայն, գեռ բավական չե առողջ սածիլ պատրաստելը։ Պետք այդ սածիլը հասցնել դաշտ և սածիլել դաշտում։

Բացառիկ գեղքերում, յեթե սածիլն արդեն պատրաստ ե և գարնան աննպաստ յեղանակների հետեւնքով դաշտ տանելը մի քանի որ կարող ե ուշանալ, այդ գեղքում անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել դանդաղեցնելու սածիլի աճեցողությունը։ Դրա համար պետք ե ջերմոցը թողնել բաց և քիչ ջուր տալ. այսպիսի սեժիմի ընթացքում բույսերն ամրանում են, բայց չեն, յերկարում։

Սածիլը դաշտ տանելուց մի յերկու շաբաթ առաջ պետք ե սկսել դրսի ողին սովորեցնել, վորպիսզի դաշտ տարած ժամանակ չմրսի։ Դրա համար պետք ե ող տալու ժամանակն աստիճանաբար յերկարացնել և հետզհետեւ գիշերները նույնական թողնել շրջանակները հանած։

Սածիլը դաշտ տանելու նախորյակին ջերմոցը պետք ե լավ ջրել և առաջ առավույյան հովին քաշել։ Աւժեղ արև ժամանակ սածիլը չպետք ե քաշել, քանի վոր նա խկույն թառամում ե։ Սածիլը պետք ե այնպիս քաշել, վոր արմատները գուրս գան հողով, այնուեւեա սածիլը պետք ե դասավորել հատուկ արկղներում, ձածկել թաց շորով և գնել հով տեղ։

Սածիլը քաշելու ընթացքում պետք ե զգույշ լինել, վորպիսզի թարմ ցողունները չկոտրին, բացի դրանից, արկղում դասավորելուց առաջ պետք ե ընտրել և հիվանդ ու թույլ սածիլներն առանձնացնել, վորպիսզի նրանք չանկվին և չվարակեն առողջներին։

Սածիլի հիվանդություններից արմատավզիկի սև ախտը շեշտ և աշքով նկատել։ այդ հիվանդության գեղքում ցողունն անմիջապես արմատի մոտ սեացած և բարակած և լինում։ Պարզ ե, վոր այգպիսի բույսերը պետք ե առանձնացնել և այբել։

Ջերմոցում այս ձեռվ տարված խնամքը կապահպի մեր դաշտերն առողջ և ամուր սածիլներով։

#### Գ. ԱՎԱԳՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ՊՍԱԿԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ  
ՍԻՍՏԵՄՈՎ

Բոլոր տնկարաններում ու ծառաստաններում պտղատու ծառերի պսակի ձևավորման այն յեղանակը, վոր կաղմիկել և սիրող-պրակախիկների հին գերմանական գպրոցի ազդեցության տակ, չի համապատասխանում սոցիալիստական խոշոր մեքենայացված պտղատու տնտեսության պահանջներին, և դրա համար ել պիտի ամենաըրժատական փոփոխության յենթարկվի:

Ի՞նչպիսի պահանջների պիտի բավարարի ծառի պսակը խո- շոր մեքենայացված պտղատու տնտեսության պայմաններում:

Այս պահանջները հետեւալներն են՝

1. Ապահովել հողի մշակման մեքենայացման առավելագույն հնարավորությունը:

2. Ծառի բարձրությունն իջեցնելով՝ բերքահավաքի, պաշ- կի ինամքի, սրսկման, բերքի նորմալորման, ետման վրա ծախ- սվող աշխատանքը նվազագույնի հասցնել:

3. Ճյուղերի հիմնական կմախք ստեղծել, վորոնք կայուն ու ամրապինդ կապված լինեն բնի հետ և կարողանան առանց հե- նարանի դիմանալ պտուղների նորմալ բերքին՝ խեչակների նվա- զագույն քանակ պահանջնելով:

4. Տարածության մեջ հիմնական ճյուղերը ճիշտ և հավասա- րաչափ բաշխելով և հետևապես լույսի առավելագույն մատչելիու- թյուն ստեղծելով՝ ապահովել պտղաշիվերի լավագույն զարգա- ցումն ու պտուղների լավագույն գունավորումը:

Պահպին առաջադրվող հիմնական պահանջները վորոշելուց հետո՝ կանգ առնենք նրա ձևավորման այն յեղանակի վրա, վոր կիրառվում են արդյունաբերական պաղաքուծության պրակտի- կայում:

Պահպի ձևավորման աշխատանքներն ակնվում են տնկարա- նում և փոխադրվում են այդի:

Ամենից առաջ անհրաժեշտ ե վորոշել թիվ բարձրության հարցը: Ինչպես հայտնի յեն, տարբերում են բարձրաբուն, կիսա- բարձրաբուն և ցածրաբուն ծառեր, ըստ վորում այս ձևերից յու- րաքանչյուրն ունի իր արժանիքներն ու թերությունները:

Բարձրաբուն ծառերը հետեւալ հիմնական թերություններն ունեն:

1. Յենթարկվում են բնի այրվածքներ ստանալու և ցրտա- կարությունների վասնգներին, վորոնք մեծ են Արարայան դաշտի ցամաքային կիմայի պայմաններում:

2. Բերքն ավելի յե մնավում քամիներից, առանձնապես բաց, քամիներից բավականաչափ չպաշտպանված վայրերում:

3. Բունն ստանալու համար ավելի յերկարատե ժամանա- կամիջոց և պահանջվում, քան կիսաբարձր և ցածրաբուն ձևա- վորման գեպքերում:

4. Քանի վոր բարձր բուն ստանալու համար ավելի յերկար- ժամանակամիջոց և պահանջվում, ապա պաղաքերությունն սկսու- վում ե ավելի ուշ, մի բան, վոր անձնենանու յե, և վերջապես—

5. Ծառի խնամքը (սրսկում, բերքահավաք, ետում և այլն) ավելի գժվար ե, քան ցածրաբուն ձևավորման գեպքում:

Իսկ բարձրաբուն ձևի առավելությունները կայանում են են նրանում, վոր դա հնարավորություն և տալիս միջարքային տարածություններն ավելի յերկար ժամանակ միջնական՝ կուլ- տուրաներով ողտագործել, այլ և զյուրացնում և այգու հողը մշակելու համար մեքենաներ ու գործիքներ կիրառելը, մի բան, վոր հնարավոր և կիսաբարձրաբուն և ցածրաբուն ձևի դեպքե- րում միայն հատուկ հարմարանքներ կիրառելիս:

Բոլոր այն թերությունները, վոր հիշված են վերևում, բա- ցակայում են ցածրաբուն ձևավորման գեպքում, զրա համար ել նորից զրանք չեն թվարկվի:

Իսկ կիսաբարձրաբունը, իր արժանիքների և թերություն- ների կողմից միջնական դիրք և գրավում բարձրաբունի և ցած- րաբունի միջև և պետք և գերազարող ձևը հանդիսանա մեր բո- լոր այգիներում:

Այգու հողը մշակելիս նշանակություն ունի վահ միայն բնի բարձրությունը, այլ և պսակի բարձրությունը պետք և վորոշվի պսակի բնույթով: Այսպես, բնինակ բարձրապսակ սորտերի նկատմամբ, ինչպես կանգիլ սինապը, ուղմարինն են (վորոնք չեն մտել ստանդարտ ասոր- ակիմինարի մեջ), այլ և տանձի սորտերի մեծամասնության նկատ- մամբ, վորոնք բրգաձև պսակ ունեն, բնի բարձրությունը կարող է 50—60 սանտիմետր վորոշվել մինչզեռ ցածրապսակ և լայնա- տարած սորտերի նկատմամբ, ինչպես բոյկենը, բելֆորը, ախմի- բենկոն և ուրիշներն են, բնի բարձրությունը կարող և հասնել 70—90 սանտիմետրի և նույնիսկ ել ավելի:

Յենթարկվ սրանից, հողողողկոմական գոնայ կայանը բնի բարձրությունը հետեւալ չափերի յեն ընդունում:

1. Սովորական և բրգաձև պսակ ունեցող խնձորենիների համար՝ 50—60 սմ.

2. Լայնատարած պսակ ունեցող խնձորենիների համար՝ 70—90 սմ.

3. Տանձենիների համար՝ 50—60 սմ.

4. Ծիրանիների համար՝ 50—70 սմ.

5. Շլորենիների և կեռասենիների համար՝ 50 սմ.

6. Դեղձենիների և բարենիների համար՝ 40—50 սմ.

Հրահանդի սկզբում մենք արդեն նշեցինք, թե ինչպիսի պահանջների պիտի բավարարի ճիշտ բուծած պսակը Ամերիկյան անյարուա սիստեմի կառուցման սկզբունքը կայանում և հետեւյալում:

1. Ճյուղերը դասավորվում են սպիրալով 20—30 սանտիմետր միջանցից հեռավորությամբ, վոր առանձին ճյուղերի ավելի հաստատուն համաճում և ստեղծում լիդերի (ՈՐՈՅԾՆԻԿ, ուղեկցող) հետ, քան հին գերմանական սիստեմումն եր, յերբ բոլոր ճյուղերը գուրս նյին գալիս մի կետից:

2. Նայած սորտի պսակի ձեին, լիդերը կարող ե գերացվել կամ պահպանվել:

3. Մայր ճյուղեր կազմելու համար ընտրվում են բութ անկյունով գուրս յեկած շիվերը, վորոնք ճյուղերի ավելի հաստատուն համաճում են տալիս:

Յերեք չպետք ե թույլ տալ, վոր մի տեղից գուրս գան հաստությամբ և հզորությամբ իրար հավասար յերկու ճյուղեր, վորովհետև դա տանում ե դեպի նըանց Ջատումը: Միշալիդերը պիտի ուժեղ լինի մյուս ճյուղերից, վորովհետև անման պրցեսում մեծ ճյուղը բոնում ե ավելի փոքր ճյուղի նոր կազմվող հյուսվածքը և վերջինս ներածում ե մեծ ճյուղի հյուսվածքի մեջ և կապը նրանց մեջ լինում և ավելի ուժեղ:

Յեթե հողային պայմանները լավ են և միամյա տունկերն ուժեղ են, ձեավորման կարելի յե ձեռնարկել միամյա տունկն այդին տնկելուց անմիջապես հետո: Հակառակ գեպքում այդ աշխատանքը պետք ե կատարվի հետեւյալ տարվա գարնանը: Յեթե պսակի ձեավորումը կատարվում է տնկելու տարին, ապա հանձնարարվում ե թողնել կողային մի ճյուղ, իսկ յեթե այդում անման պայմանները բացառիկ բարենպաստ են, ապա թույլատըթ գում ե տառջին տարին հենց թողնել յերկու և մինչեւ անդամ յեթե ճյուղ:

Այս նպատակով գարնանը տվյալ տեսակին և սորտին համապատասխան միամյա ծառի վրա վերցնում են ընդունված բարձրությունը և ապա դրան ավելացնում են 3—5 բողբոջ, յեթե բույսերը թույլ կամ միջին աճում ունեն (յերբ պիտի մի ճյուղ թողնվի) կամ ել բնի բարձրությունից վեր վերցվում ե 30—40 սանտիմետր, յեթե հնարավորություն կա թողնել յերկու ճյուղ (Հաշվելով լիդերը): Իսկ շիվի մյուս մասն ետվում ե: Այդ նույն տարին վերին բողբոջից պիտք ե բուծվի այն ճյուղը, վորը բըռնելու յե կենարոնական առաջատար շիվի (լիդերի) տեղը: Այլ և բնի վրա պետք ե թողնվեն միքանի շիվեր ցածրազդիր բողբոջներից:

Ամռան ընթացքում հետևում են 25—30 սանտ. վրա ընակած հիմնական շիվերի զարգացմանը, իսկ դրանց արանքում գտնված բոլոր շիվերը յենթարկվում են ծերատաման, վորպես հաստացման շիվեր: Ամռան յերկորդ կիսին հաստացման այս շիվերը կարգում են հիմքի մոտից:

Հետեւյալ գարնանը կենտրոնական լիդերը ետքում ե իր յերկարության կեսի չափ, իսկ թողնված յերկու կողային ճյուղերն ետքում են ավելի կարճ, կեսից ավելի քիչ (մոտ 1/8 Ը) թողնելով: Դա արգում ե, վորպես գիդերը գերակշռություն ունենակողային ճյուղերի վերաբերմքում: Բացի այդ, ծերատաման ավելի կողային ճյուղերի վերաբերմքում: Բացի այդ, ծերատաման ավելի յե նպատառում կողային ճյուղավորությունը կազմվելուն: Իսկ յեթե ձայրերը չետվեյին, ապա ճյուղերը բարակ կմնային և իրենց հիմքում մերկ կլինելին ճյուղերից:

Այս հատումից հետո յերկորդ տարվա գարնանը կողային ճյուղերի վրա ամռանը կակսեն զարգանալ յերկորդ կարգի կողային ճյուղավորությունը: Այն ճյուղերի քանակը, վոր թողնվում են հետաքայլում հիմնական կմախքային ճյուղերի վրա, կախված ե վերջիններիս յերկարությունից: Այս ճյուղավորությունը թողնվում են բնից վոչ պակաս քան 30, իսկ ավելի լավ ե 50 սանկվում: Ենից պակաս քան 30, իսկ ավելի լավ ե 50 սանկվում: Ինպար հետեւ հեռավորությամբ: Դրանք թողնվում են փոփոխակիութեն (վորպես կողեր) ճյուղի յուրաքանչյուր կողմից, դրանց միջեղ ըստ կարելուն ավելի տարածություն, այն և իրարից մինչեւ 50 սմ. պահպանելով:

Բոլոր ավելորդ ճյուղավորությունների հեռացումը կատարվում ե յերրորդ տարվա գարնանը: Բացի այս յերկորդ կարգի ճյուղավորություններից, բնի վրա դուրսանում են (վերելի յերկու կողային ճյուղերից) կողային նոր շիվեր: Դրանց թույլ են տալիս աղատագրգանալ ամռան ընթացքում, իսկ 3-րդ տարվա գարնանն ետելիս նրանցից թողնվում ե միայն 2—3-ը սպիրալով, մեկը մյուսից 25—30 սմ. հեռավորությամբ, իսկ բոլոր մնացածները կտրվում են հիմքից: Այսպիսով 3-րդ տարվա գարնանը մենք ունենում ենք մի պսակ, վոր կազմված ե կենարոնական լիդերի 2—3 կողային միամյա ճյուղերից և 2—3 յերկամյա ճյուղերից:

Սիամյա ճյուղերի հեր կատարվում ե նրանց յերկարության կեսի չափով, իսկ յերկամյա (սաորին) ճյուղերի աճածը քիչ ավելի յերկար են թողնում: Ավելի ուժեղ պարզացած ճյուղերը անհրաժեշտ ե ավելի կարճացնել ավելի թույլ ճյուղերի համեմատությամբ, իսկ լիդերը սիշտ ետումից հետո պետք ե վորոշ չափով ավելի յերկար լինի կողային ճյուղերից:



ՀՀ Ազգային գրադարան



NL0282821

20790

ԳԻԱԸ 50 ԿՐՊ.



ССРА—НАРКОМЗЕМ  
Плодоовощная Зональная Станция

Борьба за поднятие урожайности в плодоовощных  
хозяйствах

Сельхозгиз

1934

Эривань